

2421
C-30

ՀԵՎՈՂ
ՇԱԹ

ՇԵՎՈՆ ԱՆԹ

Ը Ն Տ Ի Բ
Ե Բ Կ Ե Բ

Հրատարակչություն
Երևան 1968

ՀԻՆ ԱՍՏԿԱԾՆԵՐ



Հարգանքներով
Ձեր
Մայրը

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՍԵՎԱՆԻ ԳԱՅԱԹԸ. ԺԱՅՏԻՆԻՆԻ ՄԵՋ ԱՎԵՐԱԿ ՄԸ. ԻՐԻԿԱՆԱՐՈՒՑ

Վանահայրը նստած է բարի մը, ձեռքը ծնուտին ու մտախոտ կնա-
յի վար: Կիսաշույ կամարի մը տակէն կամաց դուրս կեղև ձերմա-
կաւորը:

Վանահայրը՝ բարձրահասակ, թաւ ու ալեխառն, գլխաբաց: ձեր-
մակաւորը նույնպէս գլխաբաց, երկար սև մազերով, ասորական ձկն
կրտսւթած սև ու շքեղ մորուքով:

Վայրկյան մը երկուքն ալ լուռ կնաչին իրար:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — (Չեզնտ) Կգիտե՛ս, կղիտե՛ս թագաւորու-
թյունդ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Խոժոռ) Ո՞վ ես դուն:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Գիտե՛, գիտե՛, Տի՛ս, այդ երկու-երկը խար-
խուղ խցիկները, չէ՞ որ դուն ես շիներ. հասկա այն մատուռը, որ
բոս աճապարանքն է կտուցեր. և վերջապէս, նայե՛, քու այդ նոր
Եկեղեցիդ, որուն գմբեթը օր-օրի կբարձրանա վեր և որու վլխուն
չուտով քու խոկ ձեռքովդ խաշը պիտի տնկես:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, եթե Տերը կամենա:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Նայե՛ ու հպարտացի՛ր: Զէ՞ որ այդ բոլորը
քու կամքիդ ծնունդն է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՞վ ես դուն:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ա՛յ, սևալոր, ինչո՞ւ ես ժողովրդ գլխուդ այդ
սևազգեստ ու սևահոգի մարդիկը, ինչո՞ւ ես եկեր այս հինավուրց
կղզին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՞վ ես դուն:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ելի՛ր, ելի՛ր. քշե՛ նորին դուրս դեպի կյան-
քը այդ թշվառ ու մոռյալ ամբոխը: Ելե՛ք դո՛ւրս, յու՛րք, որ զգայա-
բանքները չորցնել կուզեք ու կրթերը մարել: Դո՛ւրս այս կղզիեն,
դու՛ք, որ թշնամի եք ամեն գեղեցկության, ամեն կյանքի ու շար-
ժումի, ամեն ուժի ու ծնունդի: Դո՛ւրս, մի աղարտեք իմ աստված-
ներու այս սուրբ գրախառը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հոս գրախառ շկա: Այս ժայռի կտորին վրա ես
իմ վանքս հիմնեցի. ասկե ետքը հոս անապատ պիտի կոչվի:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Անապա՛տ... այս ծիծղուն ծովակի ծոցին,
այս թարմ արևուն դեմ: Հեոո՛ւ, կոխած տեղդ հին տաճար է աստ-
վածներու: Հեոո՛ւ, հին աստվածներու շեմքն է, որ կը խոսիմ քեզի:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հին աստվածներու ավերակներն:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ավերակը այս քարերն են, որ քեզիպանեկն
են դարսեր. քանդվեր է անոնց դարսածը: Բայց ի՛նքը կյանքի մեհ-
լանը խորտակում չունի, ինչպես և ինքը կյանքը: Կթափին քարե-
րը, կփոխվին անունները, բայց իրենք աստվածները կան ու կմը-
կան:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հոս մեռա՛ն քու աստվածներդ:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Հո՛ւս ու ամեն տեղ, ուր մարդ իր ստեղծ
կղն, հո՛ն են անոնք հավե՛րժ ու անմահ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հոս մեռա՛ն քու աստվածներդ, և անոնց ավե-
րակներուն վրա ես իմ Աստծու տաճարը կառուցի: Նայե, մութին
մեջն հեռ կնշմարվի գմբեթին արդեն կազմվող սրությունը: Հոն
կթաղավորե միայն հոգին, հոն կթաղավորե միայն Աստծու շուն-
չը...

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Հոն կթաղավորե տանջանքի գործիքն ու
մահը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Տանջանքն է, որ կբարձրացն հոգին, ստառ-
պանքն է, որ կմարբե: Եվ կյանքի ամենեն խոր բանը մահն է:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Տառապանքը կյանքի խոցն է, իսկ մահը՝
կյանքի քայքայումը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Քու բերնով կխոսի մանուկ մարդկությունը:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Քու բերնով կխոսի ցավազար մարդկու-
թյունը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հերի՛ք է. ո՛վ ես դուն, որ կհայհոյես Հեռա-
ցի՛ր, այս կղզիին վրա ալ տեղ չկա քեզի ու քու աստվածներուդ:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Այս կղզիեն ալ նո՛ւյն անշխարհն է, ինչպես
ամբողջ աշխարհը: Երկրպագե՛, մոլորվա՛ծ, հավերժ աստվածնե-
րուն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հեոացի՛ր:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Խոստովանե՛, մոլորվա՛ծ, ու երկրպագե՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հեոացի՛ր:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Կուգա օրը ու կխոստովանիս: (Անեհույք
կըլա):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կնայի շուրջը, անհանգիստ) Ո՛վ էր: Չթա-
ցա՛վ: Տեսի՛լք, կասկա՛ծ... (Հանկարծ վնասկան) Ա՛, երբեք: Աշ-
խարհքը մուտք չունի այս կղզին: Աշխարհքը մուտք պիտի չունե-
նա՛ այս կղզին: Ո՛չ:

Ե Ր Կ Բ Ո Ր Դ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ՀՐԱՊԱՐԱԿ ԵՈՐ ԵՆՎՈՂ ԵԿԵՆՅՈՒՆ ԱՌՋԵՎԸ

Մեկ կողմը տաճարի անդուռ մուտքը: Կերևան տախտակե ելա-
րաններ: Հոս ու հոն թափված են ատաղձ, կիսատաշ քարեր, մաղ,
գործիքներ:

Ետքը ծառեր, որոնց բուններուն մեջն կնշմարվի ծովը:

Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ բուռն թա-
փով: Կղզի տերևներուն շրջուկը և ծովուն խալ աղմուկը հեռուն:

1

Մեկ-երկու բարտաշ կվալեն ծառերուն տախն դեպի ծովուն
կողմը: Տեսարանի խորքն արագ կանցնի ժամկոչը երկար ձող մը
ուսին: Եկեղեցին դուրս կուգա Ադամ վանականը արտորարով և
աշխատելով դուրս քաշելու երկար պարան մը, որուն ծայրը ներսն է:

ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — (Ձերմեռանդ) Աստվա՛ծ հասնի օգնու-
թյան: Աստվա՛ծ հասնի օգնության:

ՔԱՐՏԱՇ ՄԸ — (Կուգա ծովուն կողմն ձեռքերը չորցնելով,
բաց են ոտներն ու րևերը) Չգե՛, վա՛ր ձգե, հա՛յր-սուրբ, ալ կարիք
չկա: Ելան, ամենքն ալ ելան ամբը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Ամե՛նքն ալ, կըսես, ամե՛նքն ալ և ժողը
թափվածնե՛րը:

ՔԱՐՏԱՇ — Ամե՛նքն ալ, թեև հույսերնիս բոլորովին կտրեր
էինք, այնպես կատաղի ծով է, ապշած կեցեր էինք ճարահատու-
քսինք՝ հիմա զարնե պիտի ափի ժայռերուն և փշուր-փշուր ընե
լաստն ալ, մեջի եղողներն ալ: Ես ու իմ Աստվածը, շատ աժան
պրծան:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Փա՛ռք քեզի, սուրբ Աստվածածին, **Իսկ**
ո՞վ էին ծովը թափվածները: Շատե՛րը:

ՔԱՐՏԱՇ — Միայն երկուրը, մեր արեղան ու օրիորդը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Օրիո՞րդը... Ի՞նչ օրիորդ:

ՔԱՐՏԱՇ — Իշխանին աղջիկը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Վա՛յ, ա՛ն ալ իշխանի հետն էր է՛, **կեն-**
դանի՛ է, ուշքը վրա՛ն:

ՔԱՐՏԱՇ — Այո՛, երեխի: Հայրն ու իր մարդիկը տարին վանա-
հար խուցը: Տեսնեիր՝ ինչպե՛ս սիրիներ էր իշխանը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Կատա՛կ է, խե՛ղճը: Բայց ո՞վ կըսեր
անոնց՝ այս տեսակ եղանակով ծով դուրս դաշին:

2

Կանոնն Անտոն, Մովսէս ու Մերունի վանականները:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — է, ե՛տքը, ե՛տքը:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Թո՛ղ, թո՛ղ քիչ մը շունչ քաշեմ, «ետքը,
ետքը» հարցնելը դուրսին է, ետքը սարսափելի էր: Վա՛յ... կարծես
թևերս շարդված ըլլան: (Կեստի բարձր ֆախ մը):

Հաջորդ պատմության միջոցին, իսն եղբայրը կոտորեալն պատ-
մողին, աչք կուգան քանի մը բանվոր, Ղազար, Դավիթ, Չարաբիտ
վանականները ու կավելյան ունկնդիրներուն:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Խոսե՛, խոսե՛:

ՄԵՐՈՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Թո՛ղ, տղա՛, թո՛ղ որ ուշքի գա:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Պահ մը դեմքը կծածկե ձեռներովը և
հանկարծ բանալով) Կեսեն արդեն անցեր էինք: Մեյ մը վեր հիշ-
ւելինք ալիքներուն ծայրը, մեյ մը կիջնեինք անդունդը՝ ամենքն ալ

լաստին վրա փակեր էին իրենց տնոյը, սփրթներ ու շորցեր: Ես ու
արեղան կբաշխեինք թիբը սրբան ուժ ունեինք: Կամայ մը դուխա
դարձուցի, տեսա՛ կմտտենայինք ափին, բայց ի՛նչ ափ, ալիքները,
սր կուգան ու կզարնեն ծայռերուն, կարծես փրփուրի սար ըլլան
դեմդ կեցած: Ի՛նչ մեկըս պահեմ, սիրտս հալեցավ, բո՛ւ վերջա-
ցալ: Բայց հուսահատ ուժ տվի թիկերուս. «Յա՛ Հիսո՛ւս Քրիստո՛ս».
բո՛ւ Պիճից նստեցեր, ղվախնար»: Աս ըսելուս մեյ մըն ալ ան-
նեմ ահագին վիթխարի ալիք մը, կարծես հեռուն ցամաքեն փր-
թեր կուգար շիտակ մեր վրա... (Ոսփի Ելլելով) Այ մնացածը... ալ
ի՛նչպես ըսեմ: Գիտեմ միայն, որ լաստը հանկարծ սաստիկ թեթ-
վեցավ, կախ ինկավ անդունդի բաց շրթունքին. հանկարծ սուր ճիշ
վեցավ, կախ ինկավ մեր վրա... (Ոսփի Ելլելով) Այ մնացածը... ալ
մեր ու կարծես բան մը փրթավ մեր լաստն ու սահեցավ այդ փոսը:
մը ու կարծես ինչ մը փրթավ մեր լաստն ու սահեցավ այդ փոսը:
«Աղջի՛կս, աղջի՛կս...»: Բարձրացավ ալմուկ, իրարանցում. ես դեռ
հազիվ էի հասկցեր, որ կողքես վեր թռավ արեղան, արագ նետեց
հազիվ էի հասկցեր, որ կողքես վեր թռավ արեղան, արագ նետեց
վրայն կապան, ցատկեց շուրջ: Կասան ուժով ճանվեցավ, մնացի
վրայն կապան, ցատկեց շուրջ: Կասան ուժով ճանվեցավ, մնացի
մը ու կարծես ինչ մը փրթավ մեր լաստն ու սահեցավ այդ փոսը:
«Աղջի՛կս, աղջի՛կս...»: Բարձրացավ ալմուկ, իրարանցում. ես դեռ
հազիվ էի հասկցեր, որ կողքես վեր թռավ արեղան, արագ նետեց
վրայն կապան, ցատկեց շուրջ: Կասան ուժով ճանվեցավ, մնացի
մը ու կարծես ինչ մը փրթավ մեր լաստն ու սահեցավ այդ փոսը:

ՄԵՐՈՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Աստու հրա՛շքը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Իսկ օրիո՞րդը:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Հպարտ) Մեր արեղան աղատե՛ց:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Կողալո՞վ:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Այո՛, լողար՞ով, հանեց ափը:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Մի՛թե արեղան լող տալ գիտեր:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛րտեղն, ո՞վ էր լսել:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Ուղղակի հրաշք է:

ՄԵՐՈՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Ձեզի կըսեմ՝ Աստու մատը կա հող-
տեղ:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Բայց աղեկ, ինչո՞ւ ճամփա ելաք այս
եղանակով, Անտոն հայր-սուրբ:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Է՛, այնտեղ թափ, համոզեցի, իշխանուհի
սրբուհին ինքը այնքան խնդրեց, ո՞վ է լսողը: Իշխանը հրամայեց,
որ մտնեն լաստը՝ «Թե կվախնար, դուք մի՛ դար»: Այ ի՛նչպես
հակառակելի, բո՛ւ Աստու կամքը:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Հապա աղջի՛կը:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Ան ալ հորը կտորը:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Չէ՛, Տիրամոր կամքն էր ասիկա. (շտկվելով իր գավազանին վրա և ոգևորված) նայեցի՛ք, ո՞վ է Տիրամոր այս տաճարը կառուցողը. մեր սրբուհի իշխանուհին չէ՛. ո՞վ է մեր այս վանքը շին ու պայծառ պահողը. ո՞վ է շիներ մեր այս խուցերը, ո՞վ է, որ շարունակ ամեն մեր պետքերուն օգնութիւնն է հասեր մեզի, մենք, որ Տիրամոր աղոթող ճորտերս ենք:

ՉԱՅՆԵՐ — Իրա՛վ է, իրա՛վ է:

ՉԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Աստված երկար կյանք պարգևե մեր սրբուհի իշխանուհիին:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Ա՛ն, որ թողեր է ամեն իշխանական կյանք ու վայելք, իր զավակներն ու իր ապարանքը ու եկեր է Տիրամոր ոտքը, հո՛ն, Յամաքաբերդի մենութիւն մեջ իր կյանքին վերջին կեսը նվիրելու ճգնութիւնն ու աղոթքի:

ԴԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Երկար արե՛ մեր բարեպաշտ սրբուհիին:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Ա՛յ, Տիրամայրը անո՛ր համար է, որ ցույց տված մեզի իր հրաշքը, ազատեց այլքներին անոր եղբայրն ու այդ աղջիկը: Թող անսննն բոլոր թերահավատները ու համոզվին, որ մեր Տիրամայրը երեսն չի ձգեր իր ծառաններն ու իր աղոթողները: Անպակաս ընենք մեր աղոթքներն ու թող անպակաս ընն Ան իր օրհնութիւնը մեր վրային, անպակաս ընն մեր սրբուհի իշխանուհիին վրային: Փա՛ռք մեր Տիրամոր անունին, փա՛ռք անոր Միածին Որդու անունին, հավիտյանս հավիտենից:

ԽՈՒՄԲԸ — (Երկչուզած) Ամեն՛:

ՉԱՅՆԵՐ — Իշխա՛նը, իշխա՛նը:

3

Իսկայն խուսը կբաժնի երկու մասի, կշարվի ու կկենա խուսոր:

Կտտեն Իշխանն ու Վանահայրը, քանի մը հեռուորդներ ու վանականներ:

ԻՇԽԱՆՆԸ — (Ուղիղ դիմելով դեպի շենքը) Ասիկա՛ է ուրեմն բոլոր այնքան սիրած ու փայփայած եկեղեցին: Կոկիկ ու սիրուն տաճար է: (Հետևորդներուն) Ըսի՛ այսօր տեսնե՛մ պիտի այս եկե-

ղեցին և, ա՛յ, բոլոր տարեքններուն հակառակ կեցած եմ հիմա հոս ողջ և առողջ:

ՎԱՆԱԶԱՅԲԸ — Հանդուգն քայլ էր քրածդ, իշխա՛ն:

ԻՇԽԱՆՆԸ — Ձեր անապատը ուրիշ է, վանահայր, ուրիշ է դուրսը: Դուրսը հանդուգն եղողինն է աշխարհը: Եվ վերջապես մեյ մըն ալ, ո՞վ գիտե, կրք եմ այս կողմերը անցնելու, այնքա՛ն դործ ունիմ և զբաղում: Չտեսնեի՛ անգամ մը բոլորս եկեղեցին, չհամբուրեի՛ անգամ մը սուրբ սեղանը երթալիս առաջ:

ՎԱՆԱԶԱՅԲԸ — Վաղը օր չէ՛ք, իշխա՛ն:

ԻՇԽԱՆՆԸ — Վա՛ղը. բայց ես այս իրիկուն մեկնելու եմ Յամաքաբերդին:

ՎԱՆԱԶԱՅԲԸ — Ի՛նչ, հիմա նորեն մտադիր ես՝ ծովն անցնի՛ս:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Աստված շեն փորձեր, իշխա՛ն:

ԻՇԽԱՆՆԸ — Քա՛վ լիցի: Դեռ քանի ժամ ունինք. հույս ունիմ ծովը կմեղմի:

ՎԱՆԱԶԱՅԲԸ — Եթե քեզի շես խնայեր, սխտը է խնայես զավակ:

ԻՇԽԱՆՆԸ — Աղջիկս քաշ է: Քիչիկ մը վախցավ, քիչիկ մըն ալ ձեր Սեանի ջուրին կույ տվով, բան չկա, երիտասարդութիւնն է, կանցնի: Բայց ինչ որ այսօր տեսավ ու սարկեցավ, ա՛յ, ատիկա չի անցնիր: Չէ՛ որ իր պատանեկան հիշատակներուն ահեղ փոթորիկ մը նվիրեցի:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Կյանքի հետ չեն խաղար, իշխա՛ն:

ԻՇԽԱՆՆԸ — Ատիկա ըսողը դո՛ւն ես, ձերս՛կ: Այնքա՛ն երկար ես ապրեր, որ մոտցեր ես, թի կյանքն ինքը խաղ մըն է միայն:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Կյանքը խաղ մըն է, որդի՛ս, որ պիտի կրենք մեր ուսին, մինչև Տերը կանչե մեզի, Տիրամայրը խնայեց քեզի այս անգամ, բայց այդ մեղքը մյուս անգամ չկրկնես:

ԻՇԽԱՆՆԸ — Եվ շնորհակալ եմ իրմեն, հա՛յր-սուրբ, կաշխատիմ պարտքի տակ շմնամ: Եվ հիմա, որ ուխտի եմ եկեր իր տաճարը, չէի ուզեր եկած ըլլամ պարտով ձեռքերով: Կնվիրեմ Տիրամոր այս տաճարին կազնի գուս մը բարձրաբանդակ, այլև վարացույր մը ավագ խորանին, որ պիտի ըլլա թավիշ ու ոսկինկար:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Օրհնյալ ըլլա: Ձեր ցեղի անունը անչինչ պիտի մնա այս պատերին:

ԻՇԽԱՆԸ — Ծան պատվիրեր էմ իմ գործակալիս, ամեն տարիս
քանի շեն է իմ տունս, տասը շափ սպիտակ ցորեն զըկվի իմ մա-
լերես ձեր անապատը: Վայելքը ձեզի, ձեր սուրբ աղոթքը ծնողնե-
րուս ու զավակներուս:

ՁԱՅՆՆՐ — (Խառն) Աստված օրհնե ձեր ծնողներուն հիշատա-
կը: Ենն մնա ձեր կալն ու այգին: Աստված պահե ձեր զավակները:
Աստված ավելցնե ձեր ինչքն ու ստացվածքը:

ԻՇԽԱՆԸ — Իսկ հիմա... (Վաճառոր) Ո՞ւր է արեղան:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իսկո՛ւյն, իշխա՛ն, ետևն մարդ էմ զըկնրե
Ա՛յ, արգե՛ն:

4

Կմտնե Աբեղան Սիմոն վանախունի ու դոյրի մը ընկերակցու-
թյամբ: Աբեղան մտայ է. դեմքը անշարժ, աչքերը միշտ գնախ. տե-
ռակ մը անկամբ:

ԻՇԽԱՆԸ — (Քիչ մը դիտելեն ետքը) Ի՞նչ գեղեցիկ աղա ես
գուն ե ի՛նչ երիտասարդ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Միաբանությանս մեջ կրտսերն է, իշխա՛ն:

ԻՇԽԱՆԸ — Է՛, վրադ պիտի շըլար այդ սև վերարկուն ե ես
գիտեի իմ ընելիքս: Քեզի կուտայի իմ տակիս նժույզը, կուտայի
քեզի, ա՛յ, իմ սեփական սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ին-
ձի հավատարիմ, ե կառնեի քեզի իմ պալատս, իբրև իմ հարազատ
որդիս: Իմ սև նժույզս քոս այդ կերպարանքիդ աղվոր պիտի վաչ-
լեր, իսկ ձեռքդ, կանանեմ, շուտով պիտի սորվեր սուրիս: Զիս ոս
սուրս թե հերիք չեկամ, կուտայի քեզի ե աղջիկս...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իշխա՛ն:

ԻՇԽԱՆԸ — ...Որուն կյանքը այսօր ազատեցիր: Անիկա արգեն
քոնը կըլլար բստ օրինի: Գուրսը աշխարհին մեջ՝ ով ինչ վերցուց,
վերցո՛ւց:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իշխա՛ն:

ԻՇԽԱՆԸ — Գիտե՛մ, գիտե՛մ, այս սուրբ մենաստանին մեջ
այս խոսքերուն տեղը չէ: Բայց ի՞նչ ընեմ, կուզեի բան մը տամ,
կուզեի բան մը ընեմ, կուզեի բանով մը երախտագետ ըլլամ այս
անձնավեր, այս քաջ կտրիճին: Ափսո՛ս, այդ սև վերարկուն կկաշ-

206

կանգն իմ թևերս: (Մտտեճալով արեղային) Տղա՛ս, քու իշխանդ
քու աչքդ շատ ազբատ է ու շատ անզոր քեզի փոխարեն՝ մը ընե-
լու. ինչ որ ըսել կրնամ՝ հոս ներելի չէ, ինչ որ տալ կրնամ՝ քեզի
պետքը չէ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մեզի պետք է քու ու զավկիդ երկար արևը:

ԻՇԽԱՆԸ — Այն՛կ, ես քեզի պարտական մնացի, աղվոր զգա-
ցում չէ. ես սովոր չեմ ելեր պարտական մնալու ինչէ՛. սո՛ւր
ձեռքդ. տե՛ս իմինս, ասիկա երբեք տկար չէ եղած մեր թշնամինե-
րոսն զեմ ու երբեք ալ անարգար գործ չէ տեսած. արժանի է, որ
սեղմես այդ քոս ձեռքովդ, որ այսօր ազատեց աղջիկս ալիբերեհն:
(Պիճդ կսկզմն արևային ձեռքը) Մանե՛նք, վանահա՛յր, տաճարին
ներսը:

Իշխանը, վանախաղը, հեանորդները ե վանականներն շատերը
կմտնեն եկեղեցի:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Կամաց մը բռնելով Աբեղայի թևեն) Եր-
թա՛նք, մենք ալ երթա՛նք ու քիչ մը հանգստացի՛ր: Դեռ դժգույն ես
բուրդովին ե կզգամ մարմինդ, որ զեռ կզողա:

Կես մը գրկած կտանի դուրս:

5

ՁԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Մտտեճալով Աղալ վանականին, խոս-
քերդավոր կերպով) Հիմա ո՞րքան ժամանակ պետք է ապաշխարե
արեղան, որ տաճարին մուտքը նորեն բացվի իրեն համար:

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Ապաշխարե՛. ինչո՞ւ համար:

ՁԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Զե՛ որ ձեռք է տվեր կեկա:

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Բայց... բայց այս տեսակ դեպք...

ՁԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Ասիկա միևնույնն է, մեղքը մեղք է
միշտ: (Ավելի խոհեղավոր) Ես տեսա, երբ իրարու փաթթված
դուրս ելան ալիբերեհուն մեջեն, Իշխանին մարդիկը գրեթե բռնի
խլեցին աղջիկը անոր թևերուն մեջեն:

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — (Զայրույթով) Անմիտ բաներ կխոսիս:

207

Յած ու փոքր սենյակ մը, պատերը անգուշ բար: Ճակատը տախտակէ պարզ մահճակալ, վրան փռված է փոստ մը. չոր ու կարծր բարձ մը. իսկ կոշտ ծածկոցը կիսովին ինկած է գետին:

Սենյակին մեջտեղը էին կարպետի կտորի մը վրա ցածիկ ու բայն գրակալը, գրակալի վրան ալ մեծ ու բաց ձեռագիր մը:

Սենյակին մեկ կողմը փայտէ կռայիտ սեղան. վրան փայտէ սեխայ մը, կավէ փայտ մը և յուղի ճրագը, որ կալալաւ: Մյուս կողմը սենյակի մուտքն է:

Մահճակալին գլուխը պատեն կախված է Աբեղայի վերարկուն:

1

Աբեղան նստած է մահճակալին ծայրը, ձեռքերը կրծքին ծալած և աչքերը շեշտ կառած գետին: Անոր քովը փայտէ ցած աթոռակի մը վրա նստած է Կոյր վանականը. շիտակ, անշարժ. երկու ձեռքը գավազանին ու գլուխը բարձր պրտած:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛ւր են մտքերդ, արեղա՛:

ԱՐԵՂԱՅ — (Կցնցվի ու կբարձրացնէ գլուխը):

ԿՈՒՅՐՈՎ — Նորե՛ն, նորե՛ն:

ԱՐԵՂԱՅ — Այո՛, այո՛, մեղք է. գիտե՛մ, մեծ մեղք: Ո՛չ, ա՛լ չեմ մտածելու, ալ պետք չէ մտածեմ. երբե՛ք, երբե՛ք. պետք է շնչեմ գլխես աշտօրը, բոլորը, բոլորը, ծովը, հովը. լաստ, ալիք... ա՛խ, այդ ալիքները... (Հանկարծ վեր կբռնի բախով) Բայց ինչ հրաշալի բան է եղել կովիլը անոնց հետ, երբ անոնք իրենց լույծ կուրծքը դեմ կուսան քեզի, Երբ իրենց փրփուրը կզարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցնեն քեզի. մեկը կցատակե ուսիդ, մյուսը կգալարի լանջիդ. մեկը կհրե, մյուսը կբաշե. կճնչե. ու բոլորը, բոլորը ընկնել կուզեն քեզի. իսկ դուն միշտ երեսին, անոնց ելևէջքին հետ կտարուրերիս՝ բազկիդ զարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը հաղթահարելով. ա՛, այդ կտիվը...

ԿՈՒՅՐՈՎ — Կտիվը կլանքի համար է, արեղա՛, հոս անսպաս է:

ԱՐԵՂԱՅ — (Կտրված) Այո՛, անսպաս: Մեղա՛ քեզ, Աստված իմ, մեղա՛:

ԿՈՒՅՐՈՎ — Զգո՛ւյշ: Կա՛մ հսկե ինքզինքիդ, արեղա՛, աղոթե՛:

ԱՐԵՂԱՅ — (Խաշիւն առնէ ծունր իջնելով) Ես կորսված մեղա՛վոր մըն եմ, փրկե՛ ինձի, Տե՛ր. ես ինկած հանցավոր մըն եմ, օգնե՛ ինձի, Տե՛ր, մեղքի մեջ խեղդվող մըն եմ, բռնե՛ ձեռքես, Տե՛ր: Տե՛ս, մեղքի ծովուն մեջ... մեղքի ծովուն մեջ... ծովուն... ծովուն... (Երկու ձեռքով դեմը բռնած կենլի ռոտի):

ԿՈՒՅՐՈՎ — Ըսե՛, ըսե՛:

ԱՐԵՂԱՅ — (Հանկարծ դեմը կբանա ու շեշտ կենալի սևոր առձանի եման անշարժ դեմքին):

ԿՈՒՅՐՈՎ — Ըսե՛, ըսե՛:

ԱՐԵՂԱՅ — Ըսե՛մ... ի՛նչը:

ԿՈՒՅՐՈՎ — Ան, ինչ որ հոգ խո՛րքը, խո՛րքը:

ԱՐԵՂԱՅ — Խո՛րքը, խո՛րքը...

ԿՈՒՅՐՈՎ — Ըսե՛, ըսե՛:

ԱՐԵՂԱՅ — Ո՛վ կրնա տեսներ այդքան խորքերը, ո՛վ կրնա ըսեր այդքան խորքերը:

ԿՈՒՅՐՈՎ — Իսկ ես կտեսնե՛մ, ես կըսե՛մ:

ԱՐԵՂԱՅ — Դո՛ւն, կո՛ւյր: (Երգիծանքով) Հապա ըսե՛, նայի՛մ, ինչ որ կտեսնես:

ԿՈՒՅՐՈՎ — (Հատիկ-հատիկ) Լաստին վրա, երբ ձեռքիդ թին շուրը կպատռեր, ո՛վ էր հոգիիդ մեջ:

ԱՐԵՂԱՅ — (Ղախցած) Լոն՛:

ԿՈՒՅՐՈՎ — Որո՛ն համար այնպես կթպրտար սիրտդ. շրթունքիդ ի՛նչ բառ էր փակած, երբ շուրջդ ամենքը Աստված կկանչէին, երբ դեմդ փոթորիկն էր, որ կծառանար:

ԱՐԵՂԱՅ — (Սարսափահար) Երնե՛կ բաց ըլլալին ալքերդ, որ շտեսներ, շտեսներ...

ԿՈՒՅՐՈՎ — Երբ բոլոր հայացքները երկինք էին վերացած, երբ ամենքը կսպասեին վերին օգնության, ո՛ւր էին սևեռած քո՛ւ ալքերդ. ո՛վ էր ան, որուն առջև հոգիդ ծունր էր իջած:

ԱՐԵՂԱՅ — Լոն՛, լոն՛. դուն իրավունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել:

ԿՈՒՅՐՈՎ — (Անողոք) Ըսե՛, ի՛նչ էր ուզածդ, ի՛նչ կփնտրէիր:

ԱՐԵՂԱՅ — (Աղետով) Զգիտե՛մ, ոչինչ չգիտեմ, հերի՛ք է:

ԿՈՒՅՐԸ — Իսկ ծովուն մեջ, երբ ա՛ն օձի մը պես վզիդ փաթ-
թելած, մարմինը մարմնիդ, շունչը շնչիդ, երբ գուն ամեն ինչ մոռ-
ցած ալիքները կայտոտեր, բսե՛, նորե՛ն չգիտե՛ս, թե ինչ կուգեիր:
ԱՔԵՂԱՆ — (Նրազկոտ) Ո՛ր, կ՛հիշեմ: Կհիշեմ, ամբողջ էու-
թյամբս կցանկայի՛ որ ալ վերջ շունենար այդ թաց ճամփան, ալ
վերջ շունենար այդ վայրկյանը:

ԿՈՒՅՐԸ — Ամբարի՛շտ:
ԱՔԵՂԱՆ — (հորտակված) Քայց ունեցա՞յ իր վերջը:
ԿՈՒՅՐԸ — Ու հասար արք: Եվ երբ առին քու բնոդ թևերեդ ու
գուն ուժասպառ ինկար ավազին, արդեն դիակ մըն էիր անկենդան:
ԱՔԵՂԱՆ — Ճշմարի՛տ է. ինձի այդպես ղզացի:

ԿՈՒՅՐԸ — Դիակ մըն էս գուն և հիմա: Մարմին մը, ուրկե
էլեր է Աստու շունչը:
ԱՔԵՂԱՆ — Ա՛խ, Աստվա՛ծ իմ, կորուսի հոգիս:
ԿՈՒՅՐԸ — (Ոտքի ելլելով) Ինկի՛ր գետին ու կոճե՛, բուրձ հա-
ղիր ու ապաշխարե՛. իսկ ամեննն տառչ դե՛ս՝ իսկույն վանահոռ
մտ ու խոստովանե՛:

ԱՔԵՂԱՆ — Խոստովանե՛մ, վանահո՛րք. ի՛նչը, ինչո՛ւ Ա՛,
ամեն, ամեն բուն, բայց այդ մեկը երբե՛ք: Երբե՛ք: Եվ գուն ալ,
հայր-սո՛ւրբ, շուրա, թե...

ԿՈՒՅՐԸ — Ես կույր եմ, խուլ ու համր. բայց զե՛ս՝ ինքդ յվա-
նահոռ մտ ու ինքնակամ խոստովանե՛:

ԱՔԵՂԱՆ — (Կտրուկ) Վանահոռք երբե՛ք:

ԿՈՒՅՐԸ — Կվախնա՛ս:

ԱՔԵՂԱՆ — Ո՛ր: Քայց... բայց...

ԿՈՒՅՐԸ — Իհա՛րկե. գուն կուղևիր պահես թաքուն սրտիդ մեկ
հեռավոր խորշին մեջ քու այդ փոքրիկ նոր սրբությունդ, պահես և
երկրպագես ծածուկ:

ԱՔԵՂԱՆ — Դթա՛, դթա՛ ինձի, անողո՛ք:

ԿՈՒՅՐԸ — Իսկ գուն քեզ կգթա՛ս, կռապա՛շտ: Հիշե պատվի-
րանը. «Մի՛ եղիցին քեզ այլ Աստուած բաց յինեն»:

ԱՔԵՂԱՆ — (Կակազելով) Մի՛ եղիցին... մի՛ եղիցին...

ԿՈՒՅՐԸ — (Նշտելով) «Մի՛ արասցես քեզ կուտս բստ ամե-
նայն նմանութեան որ ինչ չերկինս ի վեր է և որ ինչ չերկրի ի խո-
նարհ և որ ինչ ի ջուրս ի ներքո երկրի...»:

ԱՔԵՂԱՆ — (Գողղոջ) «Եվ որ ինչ ի ջուրս ի ներքո երկրի»:

ԿՈՒՅՐԸ — (Կամաց-կամաց երթալով դուռը) «Ձի՛ ես եմ տեր
Աստուած քո, Աստուած նախանձու, որ հատուցանեմ զմեզս լերիս
և ի շորիս...»: (Գուրս):

ԱՔԵՂԱՆ — (Կերթա ծուկի կուգա խաչելուքյան առջև քաղկա-
տարած ու ջերմեռանդ) «Կեցո՛՛ դիս, Աստուա՛ծ, զի հասին ջուրք
չանձն իմ, ընկայ ես ի խորս անդնոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ:
Եկի՛ ես ի խորս... ի խորս... ծովու... և շրջանք... բնկղմեցին դիս...»
(Քիշ-ֆիշ կրուլեա, կնտի ծուկեռուն և գուլար կկախե կրճիկն):

Խաչն ու սեղանը կամաց կսկսի մշուշապատիլ, ամեն ինչ կը-
խանուկի իրարու, և այդ մշուշի ֆոնին վրա հեռուկեան կպարպի
աղջկան կերպարանքը: Ամբողջապես սպիտակ հագած, հագուստը
պարզ, նուրբ ու ձիգ, կարծես ջրեն հանած. մալերը սրձուկ, խոնավ
ու վրան մեկ-երկու թեյ ծովու խոտ:

Աբեղան թեթև մը գուլար կբարձրացնե, հանկարծ կտեսնե ու
սարսափահար կցատկե ոտքի:

ԱՔԵՂԱՆ — (Ետ-Ետ երթալով) Դո՛ւն... դո՛ւն...

ԱՂՋԻԿԸ — Այո՛, ե՛ս. միթե չէի՞ր սպասեր:

ԱՔԵՂԱՆ — Աստվա՛ծ իմ:

ԱՂՋԻԿԸ — Մի՛նա՞կ ես:

ԱՔԵՂԱՆ — Ես... ես մի՛նակ եմ մի՛շտ:

ԱՂՋԻԿԸ — Ա՛յ. եկա քեզի ընկեր. և եկա այսպես կհագիշերին,
որ մի՛նակ ըլլանք ես ու գուն: Դո՛ւն, իմ քաջս, իմ արես, իմ լու-
ղորդս...

ԱՔԵՂԱՆ — Հերի՛ք է:

ԱՂՋԻԿԸ — Ինչո՞ւ Զե՛ որ ես քեզմով է, որ հիմա կապրիմ,
չէ՞ որ դո՛ւն նորեն կյանքս տվիր ինձի. և ի՛նչ քաղցր է այդ կյան-
քը, որ գուն տվիր ինձի: Այս քանի՛, քանի՛ տարի ապրեք եմ ես,
ամբողջ տասնյոթը տարի, և ես չգիտեի, բնավ չգիտեի, որ չէի ապ-
ամբողջ տասնյոթը տարի, և ես չգիտեի, բնավ չգիտեի, որ չէի ապ-

բեր: Մի՞տքդ է ցնրեկը. հո՛ն, ալիքնեքուն մեջ. նայե՛, մազերս խո-
նալ են դեռ, բռնե՛, բռնե՛, շոշափե՛:

ԱԲԵՂԱՆ — (Ծո-եռ կերթա հափշտակված՝ աղջկան նայելով):

ԱՂՋԻԿԸ — Բայց գիտե՛ս՝ ի՛նչ ուժեղ թևեր ունիս և ինչպե՛ս
հիռն. իսկ ես դեռ այնպես հուզված եմ, դեռ այնպես հոգնած:
(Կուզե նստի Արեղայի անկողնին):

ԱԲԵՂԱՆ — (Արգիլել ուզելով) Օրիո՛րդ:

ԱՂՋԻԿԸ — (Կնստի անկողնին ծայրը) Ես օրիորդ եմ ծառանե-
րուս համար, ես օրիորդ եմ մեր հպատակներուն համար. իմ տերս
ինձի այլ կերպ պիտի կանչե:

ԱԲԵՂԱՆ — Սեղա՛:

ԱՂՋԻԿԸ — Վա՛յ, դուն գիտե՛ս անունս:

ԱԲԵՂԱՆ — Հայրդ քեզի այդպես կանչեց:

ԱՂՋԻԿԸ — Այո՛, Սեղա է անունս: Իսկ ի՛նչ է քու անունդ:

ԱԲԵՂԱՆ — Ինձի արեղա կկանչեն:

ԱՂՋԻԿԸ — Իսկ առա՛ջ, առա՛ջ, երբ դուն աշխարհն էիր դեռ
ու աշխարհիք:

ԱԲԵՂԱՆ — Ի՞մ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս
կհասնի:

ԱՂՋԻԿԸ — Ասիկա՛, Ա՛, ի՛նչ սառն է հոս, ինչպե՛ս կմրսիմ:

ԱԲԵՂԱՆ — Կմրսի՛ս:

ԱՂՋԻԿԸ — Բան մը տուր վրաս, որ հոգիս տաքնա:

ԱԲԵՂԱՆ — Ես ոչինչ չունիմ:

ԱՂՋԻԿԸ — (Առանց գրուխը դարձնելու, ետեր պատեն կայսված
վերադուռն մատնանիշ ընելով) Ա՛յ:

ԱԲԵՂԱՆ — Վերարկո՛ւս:

ԱՂՋԻԿԸ — Ինչպե՛ս կմրսիմ:

ԱԲԵՂԱՆ — Վերարկո՛ւս:

ԱՂՋԻԿԸ — Կվարանի՛ս: Բայց չվարանեցար կյանքդ ինձի տա-
լու. չվարանեցար, երբ ետենս կատղած ալիքնեքուն մեջը նետեցիր
քեզի:

ԱԲԵՂԱՆ — Ո՛չ, չվարանեցա: Ան ուրիշ էր:

ԱՂՋԻԿԸ — Այո՛, ան ուրիշ էր: Հոն կոխվ էր ու փոթորիկ, իսկ
հոս լուռ է ու խաղաղ, ինչպես գերեզման: Ա՛, ի՛նչ սառն է հոս,
ինչպե՛ս կմրսիմ: (Կեղև օտփի):

ԱԲԵՂԱՆ — (Կվազե դեպի վերադուռն, ձեռք կերկարե ու ետ-
րեն վարանած կանգ կառնե):

ԱՂՋԻԿԸ — (Խնդրանքով) Բե՛ր, բե՛ր...

Արեղան հանկարծ կիսե վերադուռն ու կդառնա դեպի աղջիկը,
որ արդեն աներևույթ է եղած: Արեղան կմտա քարացած. վերադ-
ուռն բռնած ձեռքը սուաջ պարկած:

4

Դուրսեն կլավի ժամկոչին ձայնը, որ մերամաղձոտ ու միալար
երգով մը ժամ կկանչե: Զայնը հետպիտե կմտանա: Արեղայի ձե-
քն կլիսա վերարկուն:

ԱԲԵՂԱՆ — (Շրթունքներուն մեջեն) Հիսո՛ւս... (Կուզե նորեն
չո՛քե խաչին դեմը, ու խելառի պես ետ կցատկե): Ո՛չ, ո՛չ: Եթե հան-
կարծ նորե՛ն երևնա... (Դեմքը կշրջե անկողնին կողմը) Ա՛խ, Աստ-
վածս երես դարձուց ինձմե: (Հեծկլառանքով կիլնա մահճակալին
օտք ու դեմքը կթաղե անկողնին մեջ):

Դուրսեն կլավի միշտ ժամկոչին երգը, որ հետպիտե հեռու ու
հեռու, կթուլնա, կնվազի ու կհալի:

Ա Ռ Ե Ջ Ի Շ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ԱՂՔՅԱՐԻՔ ԳՐԻՔԸ
ՀԻՆԱՎՈՒՅՑ ՎԻՓՆԱՐԻ ԾԱՌԻ ՄԸ ՍՏՎԵՐԻՆ ՏԱԿ

Մերունի վանականը նստած է ծառին տակը փառե նստարանին ու քնած կերևա: Աղբյուրին մտոյի խմբված են Ղապար, Մովսես, Գալիթ ու Ջաբարիա վանականները և տիրացուն, կխտսին փախուքով ու անհունգիստ: Անոնց քոյի կեցած է Աբեղան, աչքերը գետին ու կլս:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Իրա՞վ է, նորե՞ն:

ՏԻՐԱՅՈՒՆ — Տատկեր է անկողնին վրա, նստեր է կեկորդին ու սկսեր է խեղզել:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Հիտո՛ւ-Քրիստոս:

ՏԻՐԱՅՈՒՆ — Խեղճը հազիվ է շունչը ազատեր:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Ի՞նչ հակառակեր է շարը հայր Բարսեղին, առ քանի՞ երորդ անգամն է:

ՋԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Ի՞նչ կերպարանքով է եղեր:

ՏԻՐԱՅՈՒՆ — Չգիտե՛մ: Ըսավ միայն, որ ծծումբի ծուխին պես բարձրացեր է ու առաստաղի զերաններուն մեջնն կորսվեր է դուրս:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Անիծվա՛ծը: Նաքովի ինքն ալ, իբ կերպարանքն ալ:

ՏԻՐԱՅՈՒՆ — Ա՛, սարսափելի է, ազատում չկա իր ճանկերեն:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Գիշերները մինչև շնայիմ անկողնիս տակն ու նստը՝ ես երբեք պառկիլ չեմ կրնար:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Ես ալ: Անցած իրիկուն մտնեմ խուցս ու ի՞նչ տեսնեմ, դորշ սավանին մեջ փաթթված կնկան մը պես

կկզճեր է անկյունը. լեզիս պատռեցավ. խոխոյն խաշ հանեցի, անձ երևութացավ:

ՂԱՋԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Հա՛, այդ նզովից-արմատները կուզան կնկա կերպարանքով. կուզան խմբերով ու ալ ինչե՛ր ըսես շենքեր, ի՞նչ խայտառակություններ, ի՞նչ գայթակղություն...

ՋԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Իսկ ինձի կերևան միշտ մեր դյուղացիներու կերպարանքով: Գինեպան Ուսեփը, մեր դրացի Գափոն, շվի փշող կույր Ակոբը, դժուր դարձող Մինասը: Կուզան կհավարվին գլխուս, ձեռքերնին գինի, օղի, ուտելիքներ, խորոված: Խաշվի անմահական հոտը կլեցնեն խուցս, կարծես ամբողջ բակը լեցվեր են ու մատաղ կեփեն: Ալ ի՞նչ հրամաններ, ի՞նչ խնդիրք, ի՞նչ համողել, որ անպատճառ ուտեմ: Եվ մինչև Տիրամոր անունը չի տամ, չեն չքանար շիբ-դառնալիքները:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Պատիժ է, պատիժ: Ինչո՞ւ կտանջես մեզի, Փրկի՛չ:

ՋԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Հակառակի պես ալ, կարծես, մտքե՞ն կողղնան Տիրամոր անունը. կփնտրեմ, կփնտրեմ, հա՛, հա՛, լեզվիս ծայրն է, բայց չեմ կրնար ըսել՝ «Մուրք կույս Մարիամ»:

ՏԻՐԱՅՈՒՆ — Ա՛խ, ո՞ւր փախչի մարդ այս դարշելիներուն ձեռքեն: Ո՞ւր փախչիս, ի՞նչպես փախչիս:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Եվ ի՞նչ կուզեն մեղմե, և անպատճառ մեղմե՛:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Անտպատ եկողը եկեր է ստտանայեն փորձվելու, ինչպես որ ինքը Տերն մեր Հիտո՛ւ-Քրիստոս:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Հիտու-Քրիստոս ըլլա մեր զորավիգը:

ԽՈՒՄԲԸ — Հիտո՛ւ-Քրիստոս:

ՏԻՐԱՅՈՒՆ — Եվ ամեն տեղ են, ամեն տեղ, ուր ալ որ երթաւ Ա՛յ, ի՞նչ գիտեր, որ հիմա մեկը նստած չէ հո՛ս, մեր նստը: (Տեղը կփոխե): Կամ հո՛ն, քարափին ծերպերուն մեջը, կամ մեր վրան, ա՛յ. սաղարթներուն մութին մեջ: Կտեսնե՞ք... կտեսնե՞ք... մեկը հո՛ն այն մութին խորքը... կշարժվի. մեկն ալ հո՛ս, ա՛յ, աղբյուրին ափնեն. նայե՛, նայե՛. ինտո՛ր կբբբբ... (Սարտափած ետ-ետ ֆաշվելով աղբյուրեն) Հիտո՛ւ-Քրիստոս, Հիտո՛ւ-Քրիստոս: (Դեմ-դեմի կուզա վանահուր հետ):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (հոռոտ) Ի՞նչ կա, ինչո՞ւ ես վախցեր, տիրացո՞ւ:

ՏԻՐԱՑՈՒՆ — Հայր-սուրբ... (Կիչնա վաճառորդ ոտները):

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Վանահայ՛ր, շարք հանդիստ չի տար մեզի:

ՉԱՋԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Ուժեղ է խարդավանանքը շարին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Զգված) Դեռ միշտ այդ հին դե՞ն կխոսիք ինձի: (Բարկացած) Ոտքի՛ ելիր, տիրացո՞ւ:

ՏԻՐԱՑՈՒՆ — (Դեմքը ծածկած կելլե ոտի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Քիչ մը լուռ կենայի անոր, վերջը մյուսներուն ու հատիկ-հատիկ) Զարեն թող վախնա ան, ով չէ տիրեր իր մարմինն ու բնագոյնը: սատանայի իշխանութունը բնագոյնըս վրա է միայն:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Իսկ ան ո՞վ է, վանահայ՛ր, որ տիրեր է իր մարմնին ու բնագոյնըս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի՛:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահայ՛ր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛չ, հայր-սուրբ. ով եկեր է հոս ինձի հետ իմ անապատս, պետք է ավելի վեր ըլլա, քան մարդը: Իսկ շարեն թող վախնա ա՛ն, ով չէ կտրեր իր բոլոր շղթաները աշխարհին հետ, իր անցյալին հետ, իր հուշերուն հետ, իր վշտերուն, իր ուրախութուններուն:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Իսկ ան ո՞վ է, վանահայ՛ր, որ կրցեր է կտրել այդ բոլոր շղթաները:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի՛:

ՄԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆ — Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահայ՛ր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ով մարդ է ու միայն մարդ՝ անիկա աշխարհին է ու թող դառնա աշխարհին. ահա՛ պատրաստ է հայր Անտոնին լաստը: Ես չկանչեցի ձեզի հոս, որ հավաքվիք ու դեներեն սար-

սափիբ: (Ոգևորված կրարձրացնէ կրծքէն կախված պարզ խաչը) Հո՛ս Տիրոջ խաչն է, հոս դեներ չկան:

ԲՈՂՈՐԸ — (Զեմեռանդ խաչ կհանեն):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հոս կրքեր չկան, հոս բնագոյններ չկան, հոս սուրբ-հոգին է միայն, հոս մի՛տքն է միայն, վեր խոյացող մի՛տքը դեպի ճշմարտութունը, դեպի Աստված: Այս մեկը աղե՛կ հասկըցեք ու սատանաները թողեք աշխարհին: Դե՛, երթաք խաղաղությամբ և Տերը ըլլա ձեզի բոլորիդ հետ:

ԲՈՂՈՐԸ — Ամե՛ն: (Կգրվին):

Վանահայրը կեցած է մինակ. կնայի անոնց ետեւն տխուր գուխը շարժելով, երբ քովն կամաց մը կմտանա Աբեղան, կծօի, պոռչ կրարձրացնէ Վանահար փեշը ու կհամբուրէ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հանկարծ կզգա ու կդառնա ետ) Ի՞նչ կընես, որդիս, ի՞նչ կընես:

ԱՐԵՂԱՆ — Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՞նչ կուզես, որդի՛ս, ի՞նչ ունիս:

(ԱՐԵՂԱՆ — Որքա՞ն բարձր ես դուն, հայր. որքա՞ն, որքա՞ն բարձր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Բարձր կձգտիք մենք բոլորս, որդյա՛կ:

ԱՐԵՂԱՆ — (Արեամարհոտ) Ա՛, բոլորս: Քու ձայնդ ինձի կարծես երկնքէն կուզա. հեռու՛ն, հեռու՛ն, վերն՛ն: է՛, մենք բոլորս քանի խելքս կհասնի՛ եզեր եմ քու թևիդ տակը, քու խրատներուդ, քու օրինակիդ. և եղավ ժամանակ մը, երբ կարծեցի, թե կ'ստանելու եմ այդ բարձունքները...)

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իսկ հիմա՞, որդի՛ս:

ԱՐԵՂԱՆ — Հիմա... հիմա... (Կտրուկ) Ես քու որոնած վերիններն չեմ, հայր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ինչե՛ր կխոսիս, տղա՛ս, կրամբասես ինքդ բեյի. դո՛ւն, իմ ընտրյալս. դո՛ւն, որ այս ամենուն մեջ ամենն ալ երբ լի վեր սավառնողն ես եղեր:

ԱՐԵՂԱՆ — Սավառնողը... գուցե՛, երբ թևերս ազատ էին ու թևթև:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Է՛, հիմա ի՞նչ եղան թեևրդ:
ԱՐԵՂԱՆ — Հիմա... հիմա թեևրս թրջվեցան, հա՛յր:
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Թրջվեցա՛ն:

ԱՐԵՂԱՆ — (Խոսեցողովոր ու մտտեհալով) Հիմա է՛ս ալ կվախե՛-
նամ, հա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կվախեա՛ս, դո՛ւն ալ, սատանայե՛ն:

ԱՐԵՂԱՆ — Սատանա՛. ո՛չ. ո՛չ սատանայե՛ն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հապա՛:

ԱՐԵՂԱՆ — Ես... ես կվախեամ... ծովեն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ծովե՛ն:

ԱՐԵՂԱՆ — Ծովե՛ն: Հոն ալիքներ կան, փոթորիկ և՛ հուզում...
և՛ կոխվ և՛... և... ամեն ինչ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կհասկնամ, որդյակ. անցած օրվան դեպքը
ցնցեր է հոգիդ. կանցնի. ի՞նչ կույ քու ու ծովուն մեջ: Թարմ է
սիրտդ, գթոտ ու կարեկից. ու ազատեցիր քեզի նման մանուկ Հակ
մբ մահեն. օրհնյա՛լ բլրատ:

ԱՐԵՂԱՆ — Բայց այդ օրեն, հա՛յր, ինձի կթվի թե ծովը... ծո-
վը սիրուն է բնության:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Շեշտ կզդտե Աբեղան ու Բիշ մը խիստ) Դուն
նայե երկի՛նք, որդի՛. երկինքը միտքն է բնության, խո՛ր ու խաղաղ:

ԱՐԵՂԱՆ — Այո՛, խոր ու խաղաղ, երբ ծավի սլայծառ է եր-
կինքը. իսկ իմ մտքերս ավելի կնմանին թխալտ օրերուն, երբ հոն
ալ ամեն բան պղտոր է ու խառնակ: (Կտրված) Ես քու որոնած
վերիններդն չեմ, հա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ատրկա ըսողը դո՛ւն ես, արեղա՛: Դո՛ւն, որ իմ
հպարտութունս ես եզեր, որուն հոգին ես ևմ խմորեր, որուն մեջ
իմ ամենաթանկագին մտածումներս եմ դրեր, իմ սեփական հոգիս
եմ դրեր, և որ ինձմե ետքը իմ գործիս շարունակողն է ըլլալու: Հա-
մեստութունը ես կսիրեմ, արեղա՛, բայց իմ ժառանգս եղողի մը
բերենն ավելի խոսանք ունեցող խոսքեր կուզեի լսեմ:

ԱՐԵՂԱՆ — (Հանկարծ դեմքը ծածկելով ու մեծկլտալով) Ա՛խ,
դուն դեռ չգիտես... դուն դեռ չգիտես, հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Բուրբուրով ալլալով կուղղվի և հանկարծ
խիստ) Ինձի նայե՛, տեսնե՛մ, նայե՛ աչքերուս:

ԱՐԵՂԱՆ — (Կհեկեկա):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մի՛ թե. մի՛ թե ճշմարիտ է կասկածս: Արե-
ղա՛, նայե՛ աչքերուս:

ԱՐԵՂԱՆ — (Կհեկեկա):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այսպես թո՛ւյլ, այսպես խե՛ղճ... Դո՛ւն, որոս
հոգին ես որձաքարի պես ամուր կկարծեի, անարատ ու կույս բա-
ցառիկ հոգի մը. ու զլուխդ հպարտ ցցած վեր, դեպի երկինք, աշ-
խարհքի ծովուն մեջ, ինչպես իմ այս կույս ու մենավոր կղզիս այս
ծովուն մեջ: Թշվառակա՛ն, խոնարհե՛լ կուզես այդ գեղեցիկ, այդ
հպարտ զուխը ցած, այս ցածի ծովուն դեմ, այն վերերեն, ուր մեր
Աստվածն է...

ԱՐԵՂԱՆ — Աստված երեսը դարձուց ինձմե:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Լոն՛, լոն՛: Այդպես խախտ՛ա, այդպես ողոր-
մեի՛ք... առաջին իսկ փորձումի՛ն:

ԱՐԵՂԱՆ — (Մտնելով իջնելով) Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Ետ կհաշվի) Ելի՛ր, Ելի՛ր. ես քեզի շատ եմ
տեսեր ծանկերուս քովը, բայց ո՛չ այդպես, ո՛չ այդպես: Ես քեզի
այդպես չեմ կրնար տեսնել: Ելի՛ր, Ելի՛ր:

ԱՐԵՂԱՆ — (Կլլկ ուսքի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Եվ հետադի՛ր Գնա՛, եզի՛ր նորեն այնպես:
Ինչպես որ էիր, ե՛տքը եկուր ինձի: Այնպե՛ս, ինչպես որ էիր. այն-
պե՛ս, ինչպես որ էիր... (Խոսքը կկտրե ու կկենա անշարժ ու խո-
ծառ):

ԱՐԵՂԱՆ — (Լուս ու գլխահակ կտմաց կենսանա):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Աշխարհքը... աշխարհքն է, որ կուզե մտնե
կղզիս: Հոն սատանաները, հոն այդ աղբիկը... և արեղան... իմ
արեղան... ա՛յդ արեղան... Ո՛չ, անկարելի է: (Խառնալով դեպի
վեր. դեպի կղզիին գազաթը) է՛յ, դո՛ւն, դո՛ւն, ի՞նչպես է քու անու-
նըդ, դո՛ւն, ճերմակավո՛ր. ո՛չ, աս պատահմունք մըն է միայն,
չուրախանաս, դիպված մը անցավոր ու պատահական. չուրախա-
նա՛ս...

ՃԱՏՈՅՐՈՒՆ ՄԵՋ ՄՈՎԱՓԻ ՄԸ ԿՏՈՐԸ

Չախ կողմը սեպ-բարձր քարափ, աջ՝ ցրիվ ժայռակույտեր. մեջտեղը ապարակ ավազուտ, ճակատը ծովն է մինչև ժայռերուն ուրբ. խորքը սարերու հեռանկար:

Պայծառ արև իրիկուն է: Ժայռերը, ծառերը, ծովը և ամեն ինչ ողողված են արևի նարինջ-կարմիր շողերուն մեջ, որոնց գույները ամբողջ տեսարանի միջոցին թեթև մը կփոխվին ու կվառնին:

1

Քիչ մը ատեն անսարանը պարապ է: Կլավի աղջիկներու սուր քրքիչ ու աղմուկ: Աջ կողմի ցածիկ ժայռերեն մեկուն վրա կերևա միգանուշ մը, կնայի աշխույժ շուրջը ու նա դառնալով ձեռքերը խոզովակաձև կդնե թերին ու ձայն կուտա:

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — շո՛ւ-ս՛, հո՛ւ-ս՛:

Կից ժայռին կերևա ուրիշ միգանուշ մը, որ ծիր ու թովաուն, ձեռքով կընե ու կկանչե դեպի հեռուն:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ. — Ա՛յս կողմը, ա՛յս կողմը:

Ու երկուքն ալ ձեռք-ձեռքի թեթև մը կցատկեն ավազուտին վրա: Մինչ նույն ժայռերու վրայեն ու ետևեն ներս կթափին հառառ ու խմբով միգանուշները, նուրբ ու թեթև, ճկուն ու շարժուն. հազած են բաց-կապույտ կամ բաց-կանաչ՝ ցանցնված փրփուր դարդերով. բոլորն ալ հերարձակ նույն գույնի ժապավեններով: Կցատկեն, կվազեն, կնետվին. ծիծաղ, հրմշտուք:

Նույն ժայռին ժայռը կերևա Արեղան իր հալածողներուն ձեռքն փայտաղի մը պես: Ետևեն ուրիշ միգանուշներ:

Արեղան կնայի ժայռեն, կշտապե վար իջնե, կգայթի ցած ու նըստած կմնա ժայռի ուրբին: Ընդհանուր կայտառ քրքիչ ու զվարթ իրարանցում:

Արեղան կամաց կեցնե ինկած տեղեն մտալ ու շվար. և հուսահատ շարժումով մը ձեռքով կգոցե աչքերը:

Կլուն բոլորը ու կանշարժանան:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Կամաց կմտանա Արեղային ու կկանչե ականջին) Սե՛ղա:

ԱՐՅՂԱՆ — (Կցեցվի ու անմիջապես կբանա աչքերը):

Ընդհանուր քրքիչ, որ խկույն կպսպլի:

ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ — (Ձանազան կողմեր ու դիրքեր իբրև առձաճանգի) Սե՛ղա... Սե՛ղա... Սե՛ղա... :

ԱՐՅՂԱՆ — Կորե՛ք, չբացե՛ք, հանուն Հիսուսի-Քրիստոսի. հանուն այս խաչի: (Ձեռքով խաչ կհանե անոնց վրա):

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ — (Շրջապատելով ու հեզկելով) Ա՛խ, այս սիրուն խեղճ մանչը: Ա՛խ, այս սիրուն խեղճ մանչը:

Ալ անոք է քու խաչը: ԱՐՅՂԱՆ — (Նստնե կուտով) Ալ անոք է աղոթքս, ալ անոք է իմ խաչը:

ՉՐՐՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Ա՛յ, ա՛յ, իզո՛ւր, մի՛ տխրիր:

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Հոս ուրախ է ամեն իր:

ԱՐՅՂԱՆ — (Մտնել) Ա՛, ի՛նչ կուզեք. թողե՛ք ինձի:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Կուզենք հոգիդ առկայծի:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Մենք բեզի գեշ ի՛նչ ենք քրքրի:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Գիտե՛ս, բերնը ենք լուրերի:

ԵՐԿՐՈՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Սերը սիրով, սերը սիրով, սրենքն ա՛ն է, պարկերով:

ԱՐՅՂԱՆ — (Աչքեր շփելով) Բայց ո՛չ, սա պատրանք է դեհի:

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Գեհ՛, ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ — (Թե-թեի կուտան, մեջ կառնեն Արեղան, կլառնան շուրջը ու կերգեն պարելով):

Գեհ, դեհ, թե-թեհ, պարենք, երգենք թե-թեհ, գուցե սիրտը թեթեհ

այս անսերի, անթեհի: Թե՛ք, թե՛ք, սե՛ր ու վե՛ր.

ավե՛ք թե՛ք, թույլ վեր:

ԱՐԵՂԱՆ — (Կնարակովի Երուզ Միգանուշի վրա)
Ըսե՛. ըսե՛, դուն ի՞նչ ես,
այդպես անուշ կհնչես

ԵՐՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Մտ ցառկելով թեթև)
Չէ՛, ո՛չ դե եմ, ո՛չ փերիս
բեղի ծովին լուր բերի:

ԱՐԵՂԱՆ — Ուրեմն կա՞ս, կապրի՞ս դունս
ԵՐՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Կապրիմ այնպես, ինչպես դունս

ԱՐԵՂԱՆ — Ո՛ւր է տունդ, բուշնդ ո՞ւրս
ԵՐՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Եվ հո՞ւս, և հո՞ւն, ամենո՞ւրս:

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Ալեկուշներ, միգանուշներ,
մենք բոլորս անուշներս

ԱՐԵՂԱՆ — Չեզի երբեք ես չե՛մ տեսեր
ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Մախ պետք էր սե՛րս

ԵՐԿՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Ու կարտաներ, սպասումներ...
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Ընկերները ճեղքելով առաջ

կանցնի)

Բայց ծանոթ ենք ես ու դունս

ԱՐԵՂԱՆ — Իրար ծանոթ, ես ու դո՞ւնս
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Հա՛, կհիշես այն առտունս

Կբք ծովուն մեջ, Աեղան լանջիդ,
փոթորիկը ականջիդ...

ԱՐԵՂԱՆ — (Ոգևորվելով) Երբ կո՞րվ էր ալիքին հետ:
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Շարունակելով),

...Կկովիք մեզի հետ,
որ օտարող կից մը ավին

պինդ զարկովը ուժեղին
երկու ծիծիս մեջտեղին...

ԱՐԵՂԱՆ — (Կարեկցոտ) Ցավեցա՞վ:
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Ընկերներուն) Ցա՞վս ի՞նչ բան է՞

ցավ: (Շարունակելով իր խոսքը)...
Այնպես փափով, այնպես ամուր,

որ դարձա բուռ մը փրփուր:

ԱՐԵՂԱՆ — Դո՞ւն, փրփո՞ւր...

ՎԵՑԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Քեճուշ փաթրվելով ճիգերուղին)
Անո՛ւշ բուրիկ,

Փրփուրի՛կ,
հա՛տ մը, հա՛տ մը

համբուրիկ:
ՉՈՐՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Չանջ ալով)
Ա՛խ, դուք չբերի՛ք:

ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Մտանել)
Թող տուր ինձի. է՛ հերի՛ք:

ԱՐԵՂԱՆ — Իսկ ե՛րբ թողիք դուն ծովը:
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Երբ չէր ինկեր դեռ զովը.

այսօ՛ր, շերմիկ կեսօրին:

ԱՐԵՂԱՆ — Թողիք ի՛նքզ, կամովի՞նս
ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Հայր արեք կանչեց վեր:

ԱՐԵՂԱՆ — Հայր... արե՞ք. հրավե՛րս
Եվ ինչո՞ւ

ՀԻՆԳԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — (Միծաղելով ու զարմանումով ընկեր-
ներուն) Ինչո՞ւ

ԱՌԱՋԻՆ ՄԻԳԱՆՈՒՇ — Չո՞ւ, չո՞ւ
ՎԵՑԵՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Չվիլու, չվիլու,

հովերուն հետ պաշվիլու

ԱՐԵՂԱՆ — Հովերո՞ւնս:
ԵՐԿՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Ա՛յ, ա՛յ, եկա՛նս:

ԽՈՐՔԵՆ ԽՈՐՄԲ ՄԸ — Եկա՛ն, եկա՛ն:
ՉՈՐՐՐՐԳ ՄԻԳԱՆՈՒՇ — Հովիկները, հովիկները, փախե՛ք:

ՈՒՐԻՇ ԽՈՐՄԲ ՄԸ — (Ոստոսելով) Եկա՛ն, եկա՛ն, հովիկ-
ները:

Ընդհանուր իրարանցում: Ներս կթափին կովիկները՝ թարմ ու
թեթև պատանիներ խոյով մազերով, հագուստանին գորշ, ծալավոր ու
ծածանուտ:

Կթափին ներս տեսարանի խորքին, կխառնվին միգանուշներուն,
կփաթթվին անսեց վույզ-վույզ կամ խմբերով. և առանց բնավ կանգ
առնելու, անսնք ալ իրենց հետ քաշելով, դուրս կելլեն տեսարանի
առջևի մասն, ցատկելով, աղմուկով ու ծիծաղով:

Չույզ մը անցնելու առեն,

ՄԻԳԱՆՈՒՇ — Սպասել ալ որ կուտա՞ք:
 ՀՈՎԻԿԸ — Կովի էինք սարի տակ:
 ՄԻԳԱՆՈՒՇ — Ի՛հ, աս որո՞ւն հետ նորեն:
 ՀՈՎԻԿԸ — Ա՛ն, որ վերը ձյուներեն:
 ՄԻԳԱՆՈՒՇ — Կատեմ ատոնք բոլորն ալ, ի՛նչ կուպիտ են,
 ինչպե՛ս պաղ... (Կանցնին)

Փոքր խումբ մը իրար քաշելով.

ՀՈՎԻԿ ՄԸ — Մտնե՛նք թուփին ծոցերը:
 ՈՒՐԻՇ ՀՈՎԻԿ ՄԸ — Երթանք ծովուն բացերը:
 ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ — Երթա՛նք պարենք, հա՛, պարենք:
 ՈՒՐԻՇ ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ — Չէ՛, բերկրանքի համար ենք:
 (Կանցնին)

Մեծ խումբ մը թե-թե շղթա կալմամ.

ՀՈՎԻԿՆԵՐ — Անուշ շո՛ւնչն եք ծովերու:
 ՄԻԳԱՆՈՒՇՆԵՐ — Դուք ալ հուշվքը կթերի:
 ՄԻԱՍԻՆ — Մենք շերմ փարած իրարու,
 ա՛, ի՛նչ կյանք է անթերի: (Կանցնին)

Վերջին՝ ետ մնացած խումբ մը շտապելով.

ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ — (Ետ նայելով Արեղային) Եկո՛ւր, եկո՛ւր,
 աղա՛, դուն ալ եկուր մեզի հետ:
 ՈՒՐԻՇ ՄԻԳԱՆՈՒՇ ՄԸ — (Փաթթվելով իւ հովիկին) Ա՛խ, չէ
 կրնար. ան անգույշ է, անընկեր...
 ԽՈՒՄՐԸ — (Հեռանալով) Անընկե՛ր...

ԱՔԵՂԱՆ — (Երկար կնայի անոնց ետեւն, մինչն աղմուկը կը-
 կուրի: Տխուր գլուխը շարժելով) Անգույշ ու անընկեր... (Լուս՝ քիչ
 մըն ալ ու հանկարծ սրտին խորքեն) Ա՛խ, դոնս գիտնայի, որ
 իզուր չէ այս ճգնութունը... Ի՛նչ կյանք է աս. մոռցված մոմ մը
 խաշելության առջև, դժգույն ու մինակ, որ կմխա ու կհալի...
 (Ձեռնովը կծածկե երեսը, գլուխը կկախե կրճիկն ու կմնա ան-
 շարժ):

Բարձր սեպ քարափի ծայրէն կերևա ձգնավորը, գպգված ու
 կիտամերկ:

ՃԳՆԱՎՈՐԸ — (Պոռայով) Է՛յ, ո՞վ է հող: Ի՛նչ գործ ունիս հող
 փոսիս գլխուն:
 ԱՔԵՂԱՆ — (Ապշահար կնայի վեր):
 ՃԳՆԱՎՈՐԸ — Է՛յ, քեզի կըսեմ, ի՛նչ բանի ես հող: (Ահագ
 ցած կմազլցի ծայրեն, երևալով ու շխանալով փառերու ցցվածքեն-
 րուն ետևը: Հասնելով փառափի կեսերուն կանգ կառնե) Ինչո՞ւ ես
 եկեր, մա՛րդ, այս անմարդ կողմերը:
 ԱՔԵՂԱՆ — Ա՛խ, երեի դուն այն ճգնավորն ես, որ մեզմե
 շա՛տ-շատ տարիներ առաջ եկեր էր մինակ այս կողին ճգնելու
 Բայց չէ՞ որ անիկա մեռած է արդեն, վաղո՞ւց, վաղո՞ւց:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Իսկ դո՛ւն. դուն մեռած չե՛ս, վաղո՞ւց, վաղո՞ւց:
 ԱՔԵՂԱՆ — Ե՛ս:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնությո՛ւն: Դուն ինձի ան ըսե՛ ինչո՞ւ ես
 եկեր այս անմարդ կողմերը:
 ԱՔԵՂԱՆ — Չգիտե՛մ. ինձի բերին:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Ո՞վ բերավ քեզի:
 ԱՔԵՂԱՆ — (Մտածկոտ) Չգիտե՛մ: Բայց չէ՞ որ քու ճանա-
 րանդ այս ժայռերուն մյո՛ւս կողմն էր, ավելի վե՛րը:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Բայց հոստեղ է իմ փոսս:
 ԱՔԵՂԱՆ — Փո՞ս. ի՛նչ փոս:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Նայե՛ ոտքերուդ տակը. ունայնության փոսը:
 ԱՔԵՂԱՆ — Ունայնությա՞ն: (Կնայի ոտքերուն տակը, սը-
 րացված է փորվածք մը գերեզմանի շափ ու ձևով):

ՃԳՆԱՎՈՐԸ — Չգո՛ւյշ. շքանդե՛ս:
 ԱՔԵՂԱՆ — Ճի՛շտ է, ճգնավո՞ր, որ դուն տեր ու թագավոր ես
 եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու, պալատներու մեջ ես ապ-
 րեր, հարլուրավորներ են ծառայիք քու ամեն մեկ քմայքիդ. վա-
 չեկքներուդ ու զվարճութուններուդ սահման չէ եղեր: Ճի՛շտ է,
 ճգնավո՞ր, ինչ որ կպատմեն:
 ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնությո՛ւն:
 ԱՔԵՂԱՆ — Կըսեն՞ թողեր ես այդ բոլորը, պալատն ու խրախ-
 ճան, իշխանությունն ու փառք. թողեր ես ամեն ինչ, հազեր ես

նքեմ, դացեր ես մարդոց մեջ ապաշխարանք քարոզելու. քարոզելու զուրկ, քարոզելու ողորմածութիւն, քարոզելու խոնարհութիւն: Ծի՛շտ է, ճգնաժողով, ինչ որ կ'պատմեն:

ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնութիւն:

ԱՐԵՂԱՆ — Ծի՛շտ է, որ ատկե ալ ես կշտացեր, եկեր ես մշտ մենութեան մեջ անողորմութիւն դանելու, մտածելու հոգիիդ փրկելութիւնը:

ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնութիւն:

ԱՐԵՂԱՆ — (Հուզված) Ծգնաժողով, ի՞նչ կ'խոսես. ունայնութիւն և քու ճգնութիւնդ:

ՃԳՆԱՎՈՐԸ — (Անտարբեր) Քիչ մը հեռու իմ փոսես. փուշի տաս:

ԱՐԵՂԱՆ — Հա՛, այս փոսը: Երեկ, գերեզմանդ է, որ վրան այդպէս կողոզաս: Բայց բաց է ու պարագայ:

ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնութիւն և գերեզմանը: Ես գերեզման շունի՛մ:

ԱՐԵՂԱՆ — Հա՛, իրավ որ. գիտե՛մ, կրտսե՛ր քեզի նեւեր ես ծո՛ղք, հո՛ն, այն մշտա զողմի բարձր ժայտեն: Չվախցա՛ր հոգիիդ կորուստին, շվախցա՛ր հանգերձյալ կյանքեն:

ՃԳՆԱՎՈՐԸ — Ունայնութիւն մըն ալ այդ քու հոգիդ ու քոս հանգերձյալ կյանքդ:

ԱՐԵՂԱՆ — (Սարսափահար) Լո՛ւ, թշվառակա՛ն, հայհոյանք է խոսածդ:

ՃԳՆԱՎՈՐԸ — Իդուր մի՛ սարսափիր ու քիչ մը հեռու փոսես:

ԱՐԵՂԱՆ — Ալ ի՞նչ փոս. ալ ինչո՞ւ համար. ուրեմն ալ ինչո՞ւ ես փորեր այդ փոսը, ուրեմն ալ ինչո՞ւ կ'պահպանես այդպէս վախով ու դողով, նուշխիսկ մահեղ ալ անդին:

ՃԳՆԱՎՈՐԸ — (Գլուխը շարժելով) Ա՛, ատիկա՛ է, ատիկա. ունայնութիւններուն ունայնութիւնը: Փորեր եմ, փորեր, նայե՛՛ս, այս եղունգնեւրովս, ուղեւորովս ու սրտովս, փորեր եմ անընդհատ ծնած օրես մինչև վերջին վայրկյանը, փորեր եմ ու որոնք տակին բան մը գտնելու համար, կարևոր բան մը. փորեր եմ ու պահպաներ, որ այդչափ աշխատանքս չկորչի. հիմա ալ կ'պահպանեմ, որովհետև իմ փորածս է. միա՛հ բանը, որ իմս է, իմ ստեղծածս Միա՛հ բանը, ա՛յ, այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ մի՛շտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան ավելի դատարկ կ'դառնաս:

Գոտա՛րկ, դատա՛րկ, կհասկնա՞ս, որ երբե՛ք, երբե՛ք չէ լեցվելու. ոչի՛շտ՝ վ, ոչինչո՛վ: Գնա՛, գուն ալ զնա փորե՛՛ք քոս փոսդ ու թշտ իմինս ինձի: (Կուգն հեռանա):

ԱՐԵՂԱՆ — Կեցի՛ր, կեցի՛ր, մա՛րդ. քեզի հարց մըն ալ. դո՛ւն, ու այդքան իմաստուն ես:

ՃԳՆԱՎՈՐԸ — (Սես մը ժայտին Լուսեն) Մա՛րդը իմաստուն... Եւնայնութիւն: (Գուտ):

5

Արեղան կերթա նորեն փոսին գլուխը և տխուր ու մռայլ կպիտեմտակոտ:

Քարկրտն մեջն կտրս կուգա կերպարանք մը ամբողջովին փաթթված մեզի նման բազի մը մեջ: Ծանր-ծանր առաջ կուգա ու Կլեմա Արեղային դնելը:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ի՞նչ է, եկա՛:

ԱՐԵՂԱՆ — (Գլուխը կբարձրացնէ, կդիտէ քեքե զարմամբով ու տեսալ մը անփութը) Գո՞ւն ալ անոնցմե՛ս:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ինձի ինչո՞ւ կ'անշեցիր:

ԱՐԵՂԱՆ — Կանչեցի՛ր. քեզի՛:

ՔՈՂԱՎՈՐԸ — Հոգիդ կ'անշեց ինձի ու եկա:

ԱՐԵՂԱՆ — Հոգի՛ս:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ինչո՞ւ է հոգիդ մոռալ. ի՞նչ կ'սորձիր:

ԱՐԵՂԱՆ — Հոգի՛ս:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ըսե՛՛, ու մի՛ ըլլար այդպէս տխուր:

ԱՐԵՂԱՆ — (Փոսը մատնանիշ ընելով) Ա՛յ, նայե՛՛:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ատ ի՞նչ է որ:

ԱՐԵՂԱՆ — Կյա՛նքը:

ՔՈՂԱՎՈՐԸ — Կյա՛նքը. այդ նեղ ու մութ փոսը:

ԱՐԵՂԱՆ — Այո՛, ունայնութեան փոսը:

ՔՈՂԱՎՈՐԸ — Ա՛յ, վախցե՛՛ր ես այդ գատարկ փոսեն: Կուգե՛՛ս լեցնեմ:

ԱՐԵՂԱՆ — (Աշխույժ) Լեցնե՛՛ս...

ՔՈՂԱՎՈՐԸ — Իսկո՞ւյն, դժար գործ չէ: (Կմտնեա. կկենա փոսին գլուխը և կսկսի իր կիսերը խուհրկավոր կանչալ շարժում-)

ներով: Եվ վերեն կսկսի մշուշի նման բան մը իջնել վար դեպի փո-
սք վերջալույսի կարմիր ճառագայթներուն տակ. իջնող մշուշին
մեջ աղոտ կնշմարվին կարծես դիմֆեր, մարմնի մասեր, տերև,
ծաղիկ, կայծեր, գույներ):

Իջե՛ք, իջե՛ք,
երազներ,
Իջե՛ք զգո՛ւյշ,
երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ,
երազներ,
Իջե՛ք թնթո՛ւշ
երազներ:
Սաղիկ, կանաչ,
թարմ հյուսեր,
բախտի կարկառ
ու հույսեր.
դող ու անցուկ
ու կարօտ,
ծածուկ արցունք
վարանոտ.
Խելքի, մտքի
հակասում,
միշտ նո՛ր կյանքի
սպասում...
Իջե՛ք, իջե՛ք,
երազներ,
Իջե՛ք զգո՛ւյշ,
երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ
երազներ,
Իջե՛ք, թնթո՛ւշ
երազներ:
Փզվանք, ժպիտ,
դուլն ու բույր,
աչեր վճիտ
ու համբույր.

Իղձեր անվերջ,
անմեկին,
տազնապ ու տենչ
մոլեգին.
օրոր, գրգիռ
ու հույզեր,
սրտի թրթիռ,
երգ ու սեր...
Իջե՛ք, իջե՛ք,
երազներ,
Իջե՛ք զգո՛ւյշ,
երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ
երազներ,
Իջե՛ք, թնթո՛ւշ
երազներ:
Աստղեր թովիշ,
բոց ու կայծ,
ցնորքներ վառ
ու առկայծ.
հավատ ուժի,
մեծության,
փառքի, կամքի
դոյության.
շոինդ, թնդյուն,
հսրարտանք,
իմաստություն...
բլո՛ւր պատրանք:
Իջե՛ք, իջե՛ք,
երազներ,
Իջե՛ք զգո՛ւյշ,
երազներ,
շոյո՛ղ, անո՛ւշ
երազներ,
Իջե՛ք, թնթո՛ւշ
երազներ:

ՔՈՂԱՎՈՐԸ — Դե', եկար ու ալ մի' ըլլար տիտուր
 ԱՔԵՂԱՆ — (Նայելով) Լեցա՛՛ք: Կուզեի ոտքս դնեմ վրան:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Դի՛ր
 ԱՔԵՂԱՆ — (Մեկ ոտով կկենա փոսին վրա) Եվ ես կեցա՛՛ծ
 եմ հիմա ունայնութեան փոսին վրա:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Դուն կեցած ես հիմա երազներու վրա:
 ԱՔԵՂԱՆ — Այո՛: Եվ փոսը լեցված է: (Հանկարծ ուրախ ետ
 կցատկն ու անգուսպ) Հե՛յ, դո՛ւն, հե՛ք, ճգնավո՛ր, հե՛յ, ունայնու-
 թի՛ւն, փոսը լեցված է, լեցված: Իսկ դո՛ւն, քողակիր հմայո՛ղ,
 ո՛վ ես դուն:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Ե՛ս. ես ալ երա՛զ մը:
 ԱՔԵՂԱՆ — Երա՛զ:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Ես ա՛ն եմ, որուն սպասեր ես դուն տարիներ
 ու տարիներ առա՛նց գիտնալու, որ կանչեր ես դուն խուցիդ մենու-
 թյանը մեջ, երկա՛ր, երկար գիշերներ առա՛նց քառ մը արտասա-
 նելու, որուն պապակիք է քու երիտասարդ ծարավ սիրտդ անվե՛րջ
 ու անվերջ առա՛նց խոստովանելու: Ես ա՛ն եմ, առանց որուն
 անապատ մըն է կղզին և որուն ներկայութեանը անապատին մեջ
 դրախտ կծաղկի: Ահա՛՛ եկեր եմ ես քեզի:
 ԱՔԵՂԱՆ — (Ոգևորված) Օրհնված ըլլա՛ քու գալուստդ, քո-
 դավո՛ր: Ըսե՛, ինչպես կանչեմ քեզի:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Կանչե՛ ինչպես որ սիրտդ ուզե, իմ անուններս
 հաշիվ չունին: Դուն ծովը շատ սիրեցիր, կանչե՛ Մովիկ, եթե կու-
 ղես:
 ԱՔԵՂԱՆ — (Երազկտա) Այո՛. ծովուն խայտուն ալիքները այս
 ժայռերու ստրին միշտ քեզմե են խոսեր ինձի:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Ե՛վ սյուքերը տերևներուն մեջեն, և՛ հավքերը
 թփերուն տակ, և կարկա՛լը աղբյուրի շրթունքին, ամե՛նք, ամե՛նք,
 ամե՛ն օր ու ամենուր ինձմե են խոսեր քեզի:
 ԱՔԵՂԱՆ — Կուզեմ տեսնեմ քու երեսդ: Բա՛ց:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Թո՛ղ. զուցե զղջաս:
 ԱՔԵՂԱՆ — Կուզեմ տեսնեմ քու երեսդ: Բա՛ց:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Աղե՛կ. եկո՛ւր, ի՛նքզ բաց:
 ԱՔԵՂԱՆ — (Վախով ու դողով) Ե՛ս:
 ՔՈՂԱՎՈՐԸ — Եկո՛ւր, բա՛ց:
 ԱՔԵՂԱՆ — (Դողդղալով կմտենա և դողորուն ձեռով կրանե

նողին ծայրը ու կհաշի: Քողը կիյնա անշնան թեւում: Կեցած է ԱՆ-
 դուն՝ ճիշտ այնպես, ինչպես որ էր առաջին արարին մեջ: Արեղան
 ետ-ետ կհաշվի ճիացած ու խելագար) Սեգա՛...
 ՍԵՊԱ — Ի՛նչ է. ահա՛՛ ես:
 ԱՔԵՂԱՆ — (Հեռոցենտ ավելի ու ավելի նազուկով) Օ՛,
 դո՛ւն. դուն իմ էութեանս հմայո՛ղը, դուն թագուհի՛ն իմ մտքերուս:
 դուն իմ սրտիս ծո՛ղը, դուն փոթորի՛կը իմ հոգիիս: Արևուն հուրքն
 ես դուն, ծովերուն հույզքն ես դուն, բնութեան պարզեն ես դուն
 ինձի: (Կենավի գետին) Թո՛ղ, թո՛ղ փաթթվիմ ստրերուդ, թող համ-
 բուրեմ կոխած հողդ, համբուրեմ այդ ճերմակ հազուստիդ անա-
 բառ փեշերը... (Կուզե գալարվի անոր ստեղծուն. աղջկան կերպա-
 բանքը կմշուշտովի ու կաներևութան: Արեղան գրկելու դիւրով
 ինկած է անշարժ այն տեղը. ուր բիշ մը առաջ ունայնութեան փոսն
 է):

**Խորքի ժայռերուն մեջէն կերևան Ազամ ու Սիմոն վանականնե-
 րը, քեթրեմտն մեկ-մեկ բաշխեալ՝ մեջը իբր:**

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Դժոխքի ճամփա է, դժոխքի ճամփա:
 Բունե՛ տեսնեմ ձեռքս:
 ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — (Օգնելով ընկերոջը, որ վերի ժայռն վար
 իջնե) Եսա՛ն, հա՛յր Սիմոն, ան ի՛նչ բան է հոն. կարծես մարդ ըլլա
 դետիքը ինկած:
 ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Խաշ կհանն երեսը) Հանուն Հիսուս-
 քրիստոսի: Մա՛րդ, այսքան հեռունե՛րը. դժբախտութեան մը պա-
 տահած ըլլա՛մ: (Կիջնե ժայռերէն և երկախով զգայլ կմտանեան):
 ԱՔԵՂԱՆ — (Անոց ստի ձայնէն կբարձրացնէ զուխը ու ապ-
 շած կնայի աղջկը) Գնա՛ց... (Կնայի շուրջը, կես մը կելլե ու կընթ-
 ափ):
 ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Ա՛խ, դո՛ւն ես, անքա՛ղ, Կաղոթի՛ր,
 ինչո՛ւ այսքան հեռունե՛րը:
 ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Վախոցա՛նք:
 ԱՔԵՂԱՆ — (Կելլե ստի, կնայի անոց ցրված արտանայտու-
 քյամբ և նանկարծ ուշադիր կսկսի գետիկը բան մը փնտրելու):
 ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Ի՛նչ կորսնես, արեղա՛:

ԱՐԵՂԱՆՆ — Ո՛ւր է, ճիշտ հո՛ս պիտի ըլլար: Ո՛ւր է փոսը, ո՛ւր է այն փոսը:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Ի՞նչ փոս, արեղա՛:

ԱՐԵՂԱՆՆ — Հա՛, իրա՛վ, մոռցա. չէ՞ որ լեցուց:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ:

ԱՐԵՂԱՆՆ — Ան... անիկա. երա՛զը:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Փայտուն) Ա՛խ, երա՛զ ես տեսեր: Քունդ տարեր էր, հա՛:

ԱՐԵՂԱՆՆ — Երա՛զ... (Հանկարծ վրա կենտվի Սիմոն վանակա՛նի, շոշափելով անոր մարմինը, պինդ-պինդ բափ տալով անոր բեր): Իսկ դո՛ւն... իսկ դո՛ւն... իսկ դո՛ւն...

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Նստ-նստ քաշվելով) Տե՛ր Հիսուս-Քրիստոս, դուն խափանես շարք:

ԱՐԵՂԱՆՆ — Իսկ ասիկա՞, իսկ ե՛ս, իսկ այս վա՛նքը, այս անապա՛տը... Ի՞նչպես իմանամ ո՞րն է քոն, ո՞րն է արթուն. ա՛ն, հոն, անո՛նք, թե՞ հոս, դո՛ւր, կ՛ս...

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Սթափվե՛, արեղա՛, սթափվե՛: Ի՞նչ երազ-ի՞նչ բան. ա՛յ, անիկա Սիմոն հայր-սուրբը, ասիկա ալ ես՛ մեղա-վոր ծառայ: Կղզիի դազաթն էինք, իջանք սունկ հավաքելու. քարե-քար, ժայռ-ժայռ հեռացանք մինչև հոս. այս կողմերը սքանչելի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողկեր եմ, նայե՛. հրաշալի սունկե-սպաս պիտի ըլլա:

ԱՐԵՂԱՆՆ — (Հանկարծ) Իսկ եթե դո՛ւ ինքզ սունկ մըն ես միայն, հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ստվերին. և քունիդ մեջ կերպդես միայն, իրբև թե վանական մըն ես ու եկեր ես սունկ հավաքելու:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Խելքի եկուր, արեղա՛, ինչե՛ր կխոսիս:

ԱՐԵՂԱՆՆ — (Շարունակելով) Կամ գուցե այն ժայռի ստվերն ես դուն, քարի կտորի մը ստվերը, որ ինկեր ես հոս ու կերպդես, թե մեղքերուդ հաղթած սուրբ մըն ես դուն: Ո՞րն է երազը, ո՞րը արթուն. ըսե՛, եթե գիտես. և ի՞նչ բան է ինքը երազը:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Վախցած ու խոսքը փոխելու ջանքով) Երթա՛նք: Երթա՛նք, արեղա՛, ուշ է արգեն: Դժոխքի ճամփաներ են, նայե՛. կատարյալ սատանայի սանդուղ:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Երթա՛նք, սը հասնինք իրիկվան հացին: Հսկում ունինք այս գիշեր:

ԱՐԵՂԱՆՆ — (Համակերպած) Երթա՛նք: Ուտե՛նք սունկե-սպասը ու կենանք հսկումք: Երազ մըն ալ ասիկա՛. բայց երկա՛ր, երկա՛ր. Երազ մը. չէ՞, հա՛յր-սուրբ:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Զգիտե՛մ, արեղա՛, ինչ ըսել կուզես:

Ե Ր Ր Ր Գ Տ Ե Ս Ս Բ Ա Ն

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԳԱՀԵՃ ՄԸ ՍՅՈՒՆԱԶԱՐԳ ՈՒ ԸՆԳԱՐՁԱԿ

Աջ կողմը խոր նիշ մը նեղ ու երկար լուսամուտներով: Նիշի առջևը փայտե բազկաթոռ, վրան բարձ, ոտքին տակը բարձ: Քովը՝ ցած ու փոքրիկ կտոր սեղան մը. վրան մեկ-երկու կանացի իրեր և գեղեցիկ ձեռագիր գիրք մը: Չախ կողմը երկար դիվան. ամեն կողմ գորգեր: ձակասը սյուներ են, որոնք դաշիճը կբաժնեն խորքի սրահեն. սյուներուն մեջ մուտք գույնի վարագույրներ:

Անդրը, մեղմ ու ակտրժելի:

1

Իշխանուհին նստած է բազկաթոռին, ձեռքը սեղանին ու կխոսի: Դեռ չթոռնած գեղեցկուբյուն, թեթև մը ձերմակած մազեր, սգավոր տիկնոջ արտաքին, պարզ ու ընտիր:

Քիչ մը քովնդի ու ետևը նստած է գետինը, գորգին վրա, Գաթաճը, որ ժիր ու դյուրաթեք, ակտր ու սևազգեստ պատավ մըն է:

Իշխանուհին դեմը գլխարաց կեցած է Գործավարը, ձեռքին որրած մագաղաթներ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Այո՛, իշխանուհին եթե կհաճի:

ԻՇԽԱՆՈՒԻՉԻՆՆ — Աղե՛կ, ինչպես դիտես. համաձայն եմ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Իսկ Սեպուհի՞ն:

ԻՇԽԱՆՈՒԻՉԻՆՆ — Տղո՛ւ. կկարգադրեմ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Կա՛վ: Իշխանուհին ուրիշ հրաման ունի՞:

ԻՇԽԱՆՈՒԻՉԻՆՆ — Ո՛չ, Բարեններ բոլորին: Իսկ Աննան թող ինքզինքը ազնկ նայի, իր այդպես թույլ կազմովը: Կըսես՞ մայրդ շատ խիստ է դժգոհ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Իշխանուհին պետք չէ որ թողներ մեզի. իր բացակայությունը շատ է զգալի ապարանքին մեջ:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — է՛, ապարանքը կդառնա և առանց ինձի Այդ տարիքին մեջ մոր կարիքը չնշին է: Ես հասցուցեր, պահպեք, կատարեք եմ իմ պարտքս: Աշխարհին տվեք եմ իմ հմարկս. հիմա քիչ մըն ալ իմ հանգիստս ու իմ հոգիս:

ՊԱՌԱՎՈՐ — (Գործալարին) Թո՛ղ, դո՛ւն ալ, քու ապարանքդ ալ: Տիրուհիս նահատակ մըն է եղեր իր ամբողջ կյանքը, հիմա կուգես, որ նորեն դար ու իյնար կյանքի անիվին տակ: Ո՛չ, ալ հերի՛ք է, հանցիտա է պետք և մեղի, քանն մեր օրերուն վերջին: Նայե՛, այս անգորր ու լսիկ մենարանը, ոչ մեկ արքունիքի հետ չեմ փոխեր:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Շի՛շտ է, սիրուն տեղ է Յամաքաբերդը, սիրուն ու հանգիստ. Սեանի լի՛ճը, դեմի կղզի՛ն:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Եվ վերջապես կուգեմ մտաիկ ըլլամ իմ եկեղեցիիս, որ կշինվի. տե՛ս, աչքիս տակը:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Քիտե՛մ իշխանուհիին բարեպաշտութունը. դիտե՛մ անոր զթոտ սիրտն ու առատաձեռնութունը: Հաս ամեն քայլիս անոր ողորմածութենն կխոսին ու կարեկցութունն: Բարեբարվածները անշա՛փ, զիտեմ: Իզուր չէ անշուշտ, որ սրբուհի կկանչեն:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — (Ժպտուն) Իրա՞վ: Թող կանչեն, անունը ոչինչ չի փոխեր: Բան մը պիտի ընեի՞, թե չէ, այս մենավոր խուլ անկյունը:

ՊԱՌԱՎՈՐ — Մանավանդ տիրուհիս պես անվերջ հոգատարության ու խնամելու սովոր սրտի մը համար:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Կին ըլլալը՝ հոգ ըսել է, եղիտա՛, իսկ մայրը՝ խնամք:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Հրաման կուտա՞ իշխանուհին, որ մեկնիմ:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Ե՛րբ կուգես՝ համփա իյնաս:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Այսպե՛ս, ժամե մը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Աղե՛կ. Աստված հետդ:

ԳՈՐԾԱՎԱՐԸ — Ասողջ մնա իշխանուհին: (Կծոխ, կհամբուրե խոնարհ անոր ձեռք ու մեջի վարագույրներեն կելլե դուս):

2

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — (Քիչ մը լուռ. և ետք հառաչանքով) է՛, կյանքը որքա՛ն քիչ բան ունի մեզի տալու:

ՊԱՌԱՎՈՐ — Մի՛ տրտնջար. քիչ ունի թե շատ, ինչ որ ունի քեզի տվեք է:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Այդպես կմտածես և դո՛ւն:

ՊԱՌԱՎՈՐ — Ճշմարտությունը ատ է:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Այն աստե շատ խղճուկ ու աղքատիկ է ինքը կյանքը:

ՊԱՌԱՎՈՐ — Գո՛ւցե:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Ա՛խ, ինչպես տխուր է այսօր սիրտս:

ՊԱՌԱՎՈՐ — Ամպոս է օրը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Ամպոս է, դուրսը. անձրև է ու թուխպ հոգիիս մեջ: Թե՛ր ինձի ավետարանս:

ՊԱՌԱՎՈՐ — (Ոտի կելլե ու Բիչ մը ստանկեն ետք) Հո՛ղ է,

թևիդ տակը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — (Վեցնելով ու բռնկով) Հա՛, մտցեք էի:

3

ՆԱԺԻՇՏ ՄԸ — (Անպակաս կին մըն է, որ վարագույրը ետ բռնկով կխոսի խոնարհ) Վանահայր հայր-սուրբն է, կուզե տեսն իշխանուհին:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Հայր-սու՛րբր:

ՆԱԺԻՇՏԸ — Այո՛, իշխանուհի՛, Ի՛նչ կհրամայե իշխանուհին:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Հո՛ս առաջնորդե: (Իրեք ձեռքն կղե վար):

ՆԱԺԻՇՏԸ — (Դուս):

ՊԱՌԱՎՈՐ — Ա՛յ, աղե՛կ եղավ. սիրտդ քիչ մը կբացվի: Դուն միշտ ուրախ ես, երբ բեզի քու եկեղեցիեդ կխոսին:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Բա՛ց վարագույրը:

4

Պոռալը ետ կրնե սյունեքուն մեջի վարագույրը և բռնած ալ կրնա պատկառանքով: Կմտնե վանահայրը ու շխտակ դեպի Իշխանուհին, որ ոտքի կելլե:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Աստու օրհնությունը քու վրադ, իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆՅՆ — Եվ քու, հայր-սուրբ: Ի՛նչ լուրեր վանքեն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ազոթք և օրհնություն:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ո՛չ, եկեղեցի՛ն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Օր-օրի կլրանա ու կգառնա տուն աղոթքի ու ներքնասույզ խոհանքի:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ի՛նչպես եղավ աշակողյան նիշը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այնպես, ինչպես սրոշեցինք անցած օր:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ուրեմն երկու սյուններուն ետևը, ուրույն կա-
մարով:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛: Ո՛չ, Ինչպե՛ս թե սյուններուն ետևը: Սյու-
ններուն կո՛ղքը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Սյուններուն ետևը: Չէ՞ որ... սյունը այսպես...
Սզիսա՛, հատակագիծը տա՛ս:

ՊԱՌԱՎԸ (Ու քիչ մը հեռուն կեցած էր ձեռքեր կրծքին պատ-
կառանգով. կերքա պատի պահարանեն կրեք ելուած մագաղաթ
մը):

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — (Փռելով մագաղաթն իր փոքրիկ սեղանին
վրա) Նստե՛, հա՛յր-սուրբ: Ա՛յ, նայն՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ա՛ս քեզի սյունները, առ ալ կո՛ղքը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Իրա՛վ է: Ինչ կնշանակե, որ այդ կտորը իրա-
կանին վրա դեռ չեմ աեսած: Երևակայելը երբեք ան չէ, շնայելով՝
ինչքան, ինչքա՛ն նայեր եմ այս հատակագծին վրա: Գիտե՛ս, հա-
ճախ ամբողջ գիշերներով այդ շենքի մասին կժամտամ. բոլոր ան-
կյունները, բոլոր մանրամասնությունները, ամեն մեկ քարը: Այն-
պե՛ս բոլորը մոտ է սրտիս, այնպես կապված է հոգիիս, կարծես
ամեն մեկ քարը ես եմ դրեր, ես եմ շիներ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կատակով) Այո՛, իշխանուհի՛, ես կկարծեի,
թե շինողը ես եմ, արդյունքը եղավ՝ որ դուն շինեցիր:

ՊԱՌԱՎԸ — Ճշմարիտ է. Մարիամ Աստվածածնի այդ տա-
ճարը իմ Մարիամ իշխանուհիիս ձեռքի գործն է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Մտածկոտ) Այո՛, դուն շինեցիր, իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ո՛չ, հայր-սուրբ, ես շինեցի այդ եկեղեցին.
մե՛նք շինեցինք այդ եկեղեցին. մե՛նք, ես ու դուն: Միասին ենք
խորհեր, միասին ենք ոգևորվեր, միասին ենք կազմեր ու միասին
ալ կերպարանավորեր: Եվ այնպես հյուսված է եղեր այդ բոլորը
իրարու, որ այժմ բնավ չգիտեմ՝ ո՞րն է որ ինձմե է ծներ և ո՞րը
քեզմե: Կհիշե՛ս, հա՛յր-սուրբ, մեր այն միասին խորհումներուն
ժամերը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կհիշե՛մ, իշխանուհի՛. բախտավոր բան է կա-
ռուցելը, մանավանդ տաճար մը, ուր քո Աստվածդ է բնակելու:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Աղվո՞ր ըսիր: (Սրազկոտ) Կյանքիս ամենն
բաղցր վայրկյաններն են եղած, երբ մենք միասին այս նույն սե-
ղանին երկու կողմը նստած՝ մեր երևակայության մեջ ստեղծեր,
կառուցեր ենք այդ շենքը:

ՊԱՌԱՎԸ — Եվ որո՞ւ նակախն քանդակվելու է քու անունդ,
դարե-դար պատմելու բոլորին քու բարեպաշտությունդ ու աստվա-
ծասիրությունդ:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Թո՛ղ մոր ու դայակի քու այդ սնափառու-
թյունդ, Սզիսա՛, ձգե՛ մեզի առանձին ու մի՛ խանգարեր:

ՊԱՌԱՎԸ — (Քրքմնջելով դուրս):

5

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Այո՛, կյանքիս ամենաբաղցր վայրկյանները
եմ քաշվիր կրկնելու, ինչ որ ճշմարիտն է. չեմ ուզեր քաշվիլ
ժողովուրդի աշքդ կձգես դեպի. ո՛չ, պետք չէ որ դեպիս ձգես: Ես ամ-
բողջ կյանքս շիտակ եմ նայեր ամենուն երեսին և կուզեմ, որ
ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը հարգանք ունիմ, շիտակ
սրտին իմ երեսիս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Չեմ հասկնար ինչ կխոսի իշխանուհին: Ես
լուսնառ շունիմ ոչ մեկուն առջևը աչքերս դեպիս ձգելու:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Բայց ճշմարտությունն ան է, որ ես ու դուն
կյանքնանք իրարու աչքի մեջ խոր ու շիտակ նայելու:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Թո՛ղ, թո՛ղ, մինչև ե՛րբ: Այ լեցվեր է բաժա-
րը: Ինձի համար սաստիկ ծանր է ատիկա ու վիրավորել: Ինչո՞ւ.

ո՞նչ հանցանք ենք գործեր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Ուրախ ելլելով) Իշխանուհին թող ինձի ներե-
պետք է մեկնիմ:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ո՛չ, ո՛չ, հա՛յր-սուրբ, մի՛ փախչիր. և ի՛նչ
օգուտ փախուստը. դուն քու հոգիեդ շեռ կրնար փախչիլ: Նստե՛,
նստե՛, պետք է, որ խոսիմ: Ամբողջ տարի մըն է, որ ես հոս եմ,
ամբողջ տարի մըն է շրթունքիս է այդ հարցը և որ շարունակ վախ-
ուր եմ տարու. իսկ այդ վախը խոր կվիրավորե իմ արժանապատ-

վորթյունս. կարծես երկու մեղավոր քլանք գեմ-դեմի կեցած, որոնք
ստիպված են ամոթով իրենց հողին ծածկելու:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ես շեմ հասկնար ինչ քսել կուզե փշխանուհին:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Չես հասկնա՞ր...:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հոսանքներդ չհասկցա ես ոչինչ:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Ո՛ր ի՞նչ, Հովհաննէս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Խայթվածի նման կցնցվի) Իշխանուհի՛... (Ա
ծանր կելլե ոտքի):

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — (Նույնպես ոտքի կելլով) Մի՛ տաք է արքունի
ամառանոցը, մեր փոքրիկ աճաղանի եզերքին, վերջալույսի այն
իրիկունք, առկե ուղիղ բսանհինգ տարի առաջ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Եվ այդ բսանհինգ տարիներուն ետեւն դեռ
կհիշե իշխանուհին այն բանի մը հասարակ խոսքերը, որ փոխա-
նակեր ենք հոն իրարու հետ:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Հիշեր եմ ես մի՛շտ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Երախտապարտ եմ, իշխանուհի: Մե՛ծ պատիվ
մը, որ ես բնավ չեմ հանդգնած երեակալելու: (Քիչ մը լուռ. վերջը
նկատեման գլուխը բարձրացնելով) Միայն... միայն այն Հովհան-
նէսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մոռցեր
իշխանուհին, այն Հովհաննէսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա
հոս կեցած է վանական մը, դրեթե ծերունի մը, հետո արքունիքին
ու ամենքին, որ եկեր է քեզի հետ կառուցվող շէնքի ծախքերու մա-
սին խոսելու:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Հովհաննէսը մեռեր է դուցե քեզի համար,
չգիտե՛մ, բայց ո՛չ ինձի: Ան միշտ կենդանի է եղեր հողիս մեջ և
կենդանի ալ կմնա: Անոր պատկերն է, վանահա՛յր, միակ պայծառ
կետը իմ ամբողջ կյանքիս մեջ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Բայց առ ըսողը կին մըն է, որ ամուսին է
ունեցիր:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — (Տեսակ մը ընդհատելով) Եվ խիստ արժանա-
վոր ամուսին մը, որ ես միշտ հարգեր եմ խորապես: Եվ խորապես
ալ տանջվեիր, որ հարգանքի տարբեր բան մը անոր սալու անկա-
րող եմ եղեր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Բայց առ ըսողը կին մըն է, որ զավակներ է
ունեցիր:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — (Խիստ) Ես կատարեր եմ պարտքու եվ շատ

ծանր է եղեր սրտիս, որ պարտավորութիւնես անկէի ոչինչ չեմ
կրցեր տալ զավակներու: Ռենցեր եմ ամեն ինչ և ամեն ունեցածս
ավեր եմ իմ հարազատներու. բայց բախտավորութիւն ոչ մեկուն
չեմ ավեր և ոչ մեկին ալ չեմ ստացեր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Վեցած է լուռ և ունեւեր կիտած):

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Լսե՛, պետք է ըսեմ բոլորը, որ մեր մեջն
վերնա այս անխորժ շարուք մեկանգամ ընդմիջու նայե՛, ես
պատով կին մըն եմ, և դուն ինքզ ըսիր քիչ մը առաջ, որ ծերունի
ես արդեն. վախնալու՞ ոչինչ չունինք, քաշվելու ալ ոչինչ չունինք,
բանի որ մաքուր է մեր խիղճը: Այս քողարկումը, զղացումներու
այս խեղաթյուրումը վայել չէ մեր դեմքին, ո՛չ քու և ո՛չ ալ իմ:
Լսե՛, ինչ որ շքեմանքս երբեք չէ արտասանեք և ինչ որ սակայն լե-
ցուցեր է իմ ամբողջ էութիւնս: Իմ կյանքիս գորշ երկնքին դուն ես
եղեր ինձի համար լույսի աստղը, ասրելու իմաստը. առանց այդ
լույսին, առանց այդ մխիթարութեան, ես չգիտեմ, ինչու՞ էի ապ-
րելու:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Ձեռնովք ճակատը սեղմած) Հերի՛ք է, հե-
րի՛ք է...:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Քու պատկերդ է եղեր իմ գեմս մենութեանս
վայրկյաններուն: Ինքս ալ աղիկ մը չգիտեմ՝ այն շերմ ազոթքները,
որ սրտես դուրս են հորդեր, ավելի նաշյալի նկարի՞ն են ուղղված
եղեր, թե՛ քու պատկերիդ Իրա՛վ է, ես պաշտեր եմ քու պատկերդ
իմ Աստծու հետ միասին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Եվ չե՞ս վախցեր Աստուծան:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Աստվա՛ծ: (Ռարձրացնելով սեղանեն ավե-
տարանը) Աստված սե՛ր է, վարդապե՛տ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Մտածկոտ գլուխը շարժելով) Այդպե՛ս...
(Հանկարձ) Իսկ հիմա՛:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Հիմա՛: Հիմա ալ, տե՛ս, այս լուսամուտը, որ
քու կողմից կնայի ու քու լուսամուտիդ, այն քու փոքրիկ լուսամու-
տիդ, ուր մինչև հեռգիշեր անմար է ճրագը: Դուն երեկ կհարգաս
ու կազոթես. ես ալ հոսկե կաշխատիմ քու մաքերդ կարգամ ու քու
ազոթքներդ: Միթե այս բոլորը հողիդ չե՞ր գիտեր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կտրուկ) Ո՛չ, բնա՛վ:

ԻՇԽԱՆՈՒԷԻՆ — Իրա՛վ: Միթե քու հողիդ նույնպես լիքը չէ՞
եղեր ինձմով, ինչպես իմ հողիս քեզմով:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Լուս է):

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Պատասխան տուր, ուրախ չէի՞ր, միթե հոգիդ ուրախ չէ՞ր, երբ հոս այս մենության մեջ դեմ-դեմի նստած կիտսեկներ ժամերով ու կծրագրեկներ: Պատասխան տուր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Անհանգիստ) Զգիտե՛մ. ես ոչի՛նչ չզգիտեմ:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Զգիտես. ես գիտեմ, միշտ ալ վստահ դիտցիր եմ, որ կապրիմ միշտ քու հոգիդ մեջ, թեև տարիներու այս երկար շարքին մեջ հազիվ ութը-տասը անգամ պատահած ըլլանք իրարու մինչև հոս գալս. և շատ ավելի նվազ մեկ-երկու խոսք փոխանակած ըլլանք իրարու. միշտ տափակ, միշտ անպուշն ու միշտ կողմնակի բաներ: Ըսե՛, ճիշտ չէ՞, ինչ որ կըսեմ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Թո՛ղ, իշխանուհի՛, հին, անցած-գացած օրեր, ի՞նչ իմաստ քրքրելը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Հայր-սո՛ւրբ, եղիք շիտակ ու պատասխան տուր: Այսօր պետք է մաքրվին հին հաշիվները:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՞նչ կուզես, կի՛ն, ի՞նչ կուզես դուն ինձմե: Ամբողջ կյանքիս կեսը տառապանք տվիր ինձի, տառապանք ու դառնութիւն, ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտասարդութիւնս, հիմա ալ մոխի՞ւր քրքրել կուզես:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Իմ խեղճ Հովհաննես...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Արդեն կյանքը տառապանքի վատ ուրիշ ի՞նչ է տվեր ինձի... և՛ քեզմե առաջ, և՛ քեզմե ետքը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ա՛խ, ես զգացիր էի...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Վերջ տանք: Ի՞նչ միտք ունի այդ հին ու մարած մոխիրը խառնելը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Մարա՞ծ... մոխի՞ր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, այդ անողոք հուշերն ալ մյուս բոլոր աշխարհային ցավերուս հետ սրտես դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վերարկուն:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Սրտեդ դուրս քամեցի՞ր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ կայծերը:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ո՛չ, շմարեցան այդ կայծերը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ո՛չ, կըսեմ քեզի. շմարեցան այդ կայծերը: Աշխատեցար, որ մարես. աշխատեցար, որ խաբես քեզի. օրոր ըսիր

հոգիդ ու համոզեցիր քեզի, թե մարեր ես. բայց շմարեցիր: Ընէր կրնար:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Խիստ) Իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — (Յաճ ձայնով) Եթե մարեցիր, հապա ի՞նչ է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մե՛ր եկեղեցին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Ստուգված ետ քաշվելով) Լո՛ւն, լո՛ւն, իշխանուհի՛:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ճշմարտութիւնը, վարդապիտ: Մենք այդ եկեղեցին շենք շինած քու բարձրյալ Աստուծոյ համար, ինչպես որ միշտ կրկնեք ես. մի՛ խաբեք քեզի. այդ եկեղեցին շինեք ենք մենք մեկի համար, մեր սիրու Աստուծոն համար:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Խորտակված) Մարիա՛մ...

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Այո՛. այդ քու եկեղեցիդ նվիրված է ո՛չ թե Մարիամ Աստվածածնին, ան նվիրված է քու Մարիամ իշխանուհիդ: Ըսե՛, ճիշտ չէ՞:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կեցած է լուս ու զլխահակ):

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ըսե՛, ճիշտ չէ՞:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Լուս է ու զլխահակ):

6

Անկուրը հանկարծ կերևա ձերմակավորը:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ըսե՛, ճիշտ չէ՞:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կցեցվի, կուրվի ու հայացքը ձերմակավորին հառած կհարանա):

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Ի՞նչ եղավ քեզի:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ըսե՛, որո՞ւն է նվիրված այն եկեղեցին, այն քու նո՛ր շինած եկեղեցին:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Լուս է):

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ըսե՛. պե՛տք է որ ըսես, պե՛տք է խոստովանիս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Խորտակված) Այո՛, ճիշտ է: Այդ... եկեղեցին նվիրված է... հի՛ն աստվածներուն:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — Ի՛մ աստվածներուս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Քո՛ւ աստվածներուդ:

ՃԵՐՄԱԿԱՎՈՐԸ — (Կանեռուրանա):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ճիշտ է, Ես սղորմելի ու մեծամիտ մարդ մըն եմ. գոցեր եմ աչքերս ու կկարծեմ, թե կթռչիմ, պարզեր եմ թեքս գոտոզ վե՛ր ու կարծիր եմ, թե հասա երկնքին:

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — Մի՛ խոսիր այդպես: Մեր սրտերուն այդ կապը, մեր այդ ամբողջ սերը եզեր է սուրբ, ջերմ ու ազնիվ, ինչպես ջերմեռանդ ազոթքի մը մրմունջը, ինչպես ընտիր կնգրուկին բույրը, որ զեպի երկինք կմխա:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Աչքերը միշտ նստած դեպի ճերմակավորին երեցած կողմը) Ո՛չ, ո՛չ: Ճշմարիտ է այս բոլորը, բայց զեռ մի՛ հաղթանակեր. կանուխ է զեռ, զեռ կաեսնվինք... (Ու արագ դուրս, առանց իշխանուհիին կողմը նայելու):

ԻՇԽԱՆՈՒՂԻՆ — (Նվար ու վախով) Հովհաննէ՛ս, Հովհաննէ՛ս, հայր-սուրբ... (Թալցած կիչնա իւ արօտին):



Ա Ռ Ա Ջ Ի Մ Տ Ե Ս Ա Ր Ա Շ

ՎԱՆԱՀԱՐ ԽՈՒՅԸ

Ճախտը քառակուսի ցած լուսամուտ մը՝ հասարակ տախտակե փեկով: Լուսամուտին մեկ կողմը բանի մը շարք դարակ՝ լիքը ամեն մեծության ու ձևի ձեռագիրներով ու մագուղաթներով: Գրադարանին ու լուսամուտին առջև փայտե սեղան մը՝ վրան նորեն գրքեր ու այլ մանր իրեր: Դուռը կողմնակի, գրասեղանին դեմը:

1

Քաց լուսամուտեն արևի առատ պայծառ ոսկի շերտ մը ինկավ է սենյակի հասակին ու սեղանին: Սեղանին առջևը լույսի այդ ոգեղումին տակ նստած է Վանահայրը՝ երկու արմունկը սեղանին ու գլուխը թաղած ամերսուն մեջ:

Քիչ մը ատեն լուս է: Կամաց կբացվի դուռը ու կմտնե Վարպետը՝ աշխատավորի փոշոտ ու աղտոտ հագուստներով: Քայ մէկընե դեպի սեղանը ու կկենա:

ՎԱՐՊԵՏԸ — Ինձի կանչեր էիր, վանահայր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Անշարժ է):

ՎԱՐՊԵՏԸ — Հա՛յր-սուրբ, կանչեր էիր ինձի:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Մանր կբարձրացնե գլուխը ու կնայի դիմացինին) Հա՛: (Քիչ մը լուս) Գե՛, ըսե՛ նայիմ, հիմա ի՛նչ պիտի ընենք:

ՎԱՐՊԵՏԸ — Ի՛նչը, հա՛յր-սուրբ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մենք հիմա ի՛նչ պիտի ընենք այդ շենքը:

ՎԱՐՊԵՏԸ — Եկեղեցի՛ն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Գլուխը կշարժեմ դահլան):

ՎԱՐՊԵՏԸ — Այսինքն ի՞նչպես Արդեն գիտես, հա՛յր-սուրբ, որ մինչև Աստվածածնի տունը ավարտած կըլլա գմբեթը. մնացածը երկրորդական բաներ են:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Մտածկոտ) Մինչև... Աստվածածին:

ՎԱՐՊԵՏԸ — Ի՞նչն է, որ քեզի հոգ կպատճառես, վանահա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ուրեմն... մինչև Աստվածածին կըլլա ավարտած: Հը՛մ. այդպես հաստատ գիտե՞ս:

ՎԱՐՊԵՏԸ — Ես իմ խոսքիս տերն եմ, հա՛յր-սուրբ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Տաֆ ու կտրուկ) Ե՛ս ալ, ե՛ս ալ իմ խոսքիս տերն եմ, վարպե՛տ:

ՎԱՐՊԵՏԸ — Ուրե՛մն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Քանի՞ տարի է, որ դուն վարպետ ես:

ՎԱՐՊԵՏԸ — Ե՛ս. ի՞նչ գիտնամ. քսան մը կըլլա:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ուրեմն քսան տարի է, որ կշինես ու կշինես. իսկ երբեք պատահե՞ր է, որ շինելից հորը քանդես:

ՎԱՐՊԵՏԸ — Քանդե՞մ, իմ շինա՞ծս. ինչո՞ւ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ինչո՞ւ այդպես զարմացար: Զէ՛ որ շինելն է դժվարը, քանզևր դյուրին է միշտ:

ՎԱՐՊԵՏԸ — Այո՛, ուրիշի շինածը: Իր շինածը քանզևր շատ դժվար է, հա՛յր-սուրբ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հայացքը լուսամուտեն դուրս նետած ու երազկոտ) Դժվար է, դժվար, իհարկե՛, երբ մանավանդ կապված է հին հիշողութիւններու, հուշերու, վշտերու, երբ կապված է անցյալիդ, երիտասարդ օրերուդ, շէ՛, վարպե՛տ: Դժվար է, իհարկե: (Լուռ ու ակնապիշ կմնա քիչ մը՝ աչեերը լուսամուտեն դուրս. և նանկարծ գլուխը շրջելով՝ խիստ ու կտրուկ) Փակե՛ սա փեղկը:

ՎԱՐՊԵՏԸ — Փակե՛մ, լուսամո՞ւտը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, այո՛, լուսամո՞ւտը:

ՎԱՐՊԵՏԸ — Բայց ի՞նչ ախորժելի արև է. ինչպե՛ս ուրախ ու տաք:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ու փակես պիտի ճիշտ ատոր համար:

ՎԱՐՊԵՏԸ — Բայց...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Արև՛... Մեզի անսլառնառ պետք է արև, ուրախ ու տաք արև: Մենք դեռ արեւապաշտներ ենք. արև՛... Չենք կրնար ապրիլ առանց ախորժելի արևի, առանց ուրախ ու տաք արևի: Գո-

նե լուսամուտ մը, գոնե ճեղք մը, գոնե գողունի ներս սարդած ճառագայթ մը... (Հանկարծ բռունցքը զարնելով սեղանին) Ո՛չ: Գոցե՛, կրսեմ քեզի, ի՞նչ ես քարացեր:

ՎԱՐՊԵՏԸ — (Վարանով կերթա կզոցն փեղկը):

Սենյակը գրեթե մութ է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այդպե՛ս: Պետք է խցվի այդ անցքը, ուրկե արևը կհասի ներս, ուրկե ցամաքը կհասի ներս, ուրկե աշխարհքը կհասի ներս:

ՎԱՐՊԵՏԸ — Բայց բնակարանդ դարձավ խավար ու մռայլ. ինչպես դամբարան:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ըսե՛ ինչպես եկեղեցի:

ՎԱՐՊԵՏԸ — (Ուսերը կցնցե):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ինչո՞ւ կվախնաս խավարեն: Խավարը խավար է կարճատես աչքերուն: Բոլոր մեծ հզացումները խավարի ծոցն են զոյացեր, բոլոր մեծ խորութիւնները միայն խավարի մեջ կարելի է տեսնել: Եվ այդ ձեր պաշտած լույսը միթե ծնունդը չէ՞ խավարի. ծնունդ մը ու մահկանացու մը: Խավարն է միայն, որ կա ու կմնա անմահ ու հավիտյան: (Յլած է ոտքի. կխուսի մտածելով):

2

Վանահայրը բռն է ու մտառույզ. լուռ է նաև Վարպետը. կմտնե Աբեղան ու կկենա դռան քովը լուռ ու խոնարհ:

ՎԱՐՊԵՏԸ — Վանահայրը նոր հրաման ունի՞ ինձի տալու:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛, միայն ո՛չ այս վայրկյանիս. նախ ուրիշ հաշիվ ունիմ մաքրելու: Գնա առայժմ: Ենթահակալ եմ քեզմե. Տե-րը քեզի հետ: (Դառնալով Աբեղային) Դո՞ւն ինչու ես եկեր, աբեղա՛:

3

ԱՐԵՎԱՆ — (Նախ կսպասե մինչև Վարպետի հեռանալը. վերջը գլուխը ավելի խանարնելով) Քեզի խոսելիք ունիմ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամփան, աբեղա՛:

ԱՐԵՂԱՆ — Գիտե՛մ, գիտե՛մ, որ ալ փակ է ինձի համար քո հողիդ համփան: Կհասկնամ, որ ասկե ետքը ես քեզի համար անարդ ու անարժան արարած մըն եմ, իսկ դուն ալ ինձի համար... (Կլոկ):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ըսե՛, մի՛ քաշվիր:

ԱՐԵՂԱՆ — Կըսեի, եթե գիտնայի: Ինքս ալ չգիտեմ, կզգամ միայն, որ մենք իրարու անհաշտ թշնամի ենք:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Թշնամի՛... Եվ հիմա ատիկա ըսելու համար է, որ եկեր ես ինձի:

ԱՐԵՂԱՆ — Ո՛չ: Ես եկեր եմ ուրիշ բան մը հայտնելու:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Խոսե՛:

ԱՐԵՂԱՆ — Գուն ըսեր ես, որ հո՛ս, այս կզդին երբեմն ուրիշ աստվածներ են ապրեր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Իր ցնցումը գտպելով) Ե՛տքը:

ԱՐԵՂԱՆ — Ըսեր ես՝ շա՛տ-շա՛տ տարիներ մեզմե առաջ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ե՛տքը:

ԱՐԵՂԱՆ — Ըսեր ես՝ հիմա մեռած են բոլորը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Լուռ է):

ԱՐԵՂԱՆ — ՄԼոա՛ծ, վաղո՛ւց մեռած:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Լուռ է):

ԱՐԵՂԱՆ — Ահա՛ եկեր եմ քեզի ըսելու, որ սիալ ես, այդ աստվածները մեռած չեն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Ամաբեկ ու ապշած) Իսկ դո՛ւն... իսկ դո՛ւն ատիկա ուրկե գիտես:

ԱՐԵՂԱՆ — (Ցած ու խորհրդավոր) Ես... ես տեսա՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Տեսա՞ր, դո՛ւն, իմ մե՛ջս. ի՛նչպես տեսար:

ԱՐԵՂԱՆ — Քո՛ւ մե՛ջդ, ինչպես թե՛ քու մեջդ: Ո՛չ. ես տեսա հո՛ն... գուրբ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛ւր:

ԱՐԵՂԱՆ — Հո՛ն, հին ճգնարաններուն շուրջը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՛նչ տեսար հոն, ճգնարաններուն շուրջը:

ԱՐԵՂԱՆ — Տեսա՛ այն մյուս... հին աստվածներուն արարածները:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Արարա՞ծ...:

ԱՐԵՂԱՆ — Կսխալիս, վանահայ՛ր: Քեզի կըսեմ՝ հին աստվածները կապրին. ու հին աստվածներուն հետն ալ իրենց հին կյան-

քը: Երբ մենք հո՛ս, մեր մութ ու նեղ եկեղեցիներուն մեջ գեամուտարած կապաշխարհներ, անոնք հո՛ն կապրին ազա՛տ, կապրին տաք ու պայծառ արևին տակ, կապույտ ծովուն վրա, ծփուն օդերուն մեջ, ավազուտ ափին. կապրին իրենց զվարթ ու եռուն կյանքը: Ինչ, շարժուն ու հարափոփոխ: Մենք կաղոթենք, անոնք կապրին: Այս ծովը, այս սարերը, այս կղզին. անոնցն է այս բոլորը, մե՛րն է միայն այս խուցերն ու եկեղեցիներն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛չ: Մերը չէ նաև ո՛չ այս խուցերը իրենց կեղծավար լուսամուտներով, ո՛չ ալ եկեղեցիներն: Անո՛նցն է, բոլո՛րն ալ անոնցն է:

ԱՐԵՂԱՆ — (Նախ ապշած, ետքը վախով) Հա՛յր, ատիկա ըստ՛որ դո՛ւն ես:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մեր Աստվածը հոս ոչի՛նչ շունի, ոչի՛նչ:

ԱՐԵՂԱՆ — Հա՛յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Անոնցն է այս բոլորը: (Մտանկալով Արեղային ու ցած) Ու բանգլի՛ պիտի այս բոլորը, արեղա՛: Մինչև Աստվածածին հոս քար մը քարի վրա չի պիտի մնա ո՛չ այս խուցերեն, ո՛չ եկեղեցիներն:

ԱՐԵՂԱՆ — Հա՛յր, կծաղրե՛ս ինձի: Գեշ կատակ է քրածդ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մաղը մըն է եղեր իմ ըսածներս մինչև այսօր ու դեշ կատակ մըն է եղեր ըրածներս մինչև հիմա: Բայց ասկե ետքը ալ լուրջ է: Փոխվի պիտի այս կղզիին վրա ամեն բան: Ոչի՛նչ, ոչի՛նչ չի պիտի մնա հոս, ո՛չ արդի շենքերեն, ո՛չ արդի հողիներեն:

ԱՐԵՂԱՆ — Իսկ հին աստվածներ՞քր, հա՛յր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Պնդե՛ գոտիդ, որդի՛ս, կանչե՛ կամբդ ու դո՛ւրս վանե մեզեդ բոլոր այդ հին աստվածները: Քանդե՛, քանդե՛. եթե պետք ըլլա, քանդե՛ ամբողջ հողիդ: Քու հոգիդ ազնիվ է, արժե այդ աշխուսանքը: (Գուրս):

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ա Ր Ա Յ

ԽԵՃՅԱՆԻ ՄԸ ԳՅՎԹԸ

Երկու կողմը երկու շարք բարձր ու հաղթ սյուներ: Ճակատը մեջտեղը լայն ու մեծ կամար մը, որ ծածկված է վարագույրով: Կանարին երկու կողմերը նույնպես սյուներ են, որանց ետևը քիչ մը

տարածություն ու քարե պատ: Կամարի մուք-վարդագույն վարագույրին վրա ոսկեկար ճաճանչավոր արև մը:

Վարագույրին առջև տեսարանին խորքը դրված է քարե փոքրիկ բազին մը, որ կմխա: Բազնի աջ ու ձախ կողմեն երկար քարե սեղաններ քիչ մը ծուռ դիրքով ու քարե նստարաններ, սեղանները մեջտեղի բազնին հետ միասին պայտի ձևը կկապեն:

Սյուներուն առջև բարձր աշտանակներ ու առկախ ջահեր: Բազինը, սյուները և աշտանակներուն մեջքը բոլորն ալ գալարված է ծաղիկներու ու կանաչի շղթայով:

1

Վառ է միայն երկու ջահ բազնին երկու կողմեն, խորքը. այնպես որ ահագին բարձր շենքը գողգոջուն կես-մուրի մը մեջ է:

ՍԵՊԱ — (Ձախ կողմի առջևի սյուններուն ետեեն ետ-ետ ներս կմտնե, միշտ նույն հագուստով, թեկված քիչ մը դեպի առաջ ու ետ-կու ձևով լը սրտանց կանչելով) *Նկո՛ւր, եկո՛ւր...*

ԱՐԵՂԱՆ — (Նրեկնալով) *Սեղա՛, Սեղա՛...*

ՍԵՊԱ — *Նկո՛ւր:*

ԱՐԵՂԱՆ — *Տո՛ւր ինձի իմ հանգիստս, տո՛ւր ինձի իմ աղօթքներս. տո՛ւր իմ վստահությունս ըրածիս, կյանքիս, ուժիս: Ամեն, ամեն ինչ կիլի շուրջս:*

ՍԵՊԱ — (Միշտ ետ-ետ դեպի աջ երթալով) *Նկո՛ւր, եկո՛ւր:*

ԱՐԵՂԱՆ — Ալ չկա ինձի հանգիստ ո՛չ խուցիս մենությանը մեջ, ո՛չ դուրսը, ո՛չ ալ եկեղեցիին կամարներուն տակը: Սաղմոսներուն մեջեն քու ձայնդ կլսեմ, մութ կամարներուն տակեն քու աչքերդ ինձի կծուտին, խունկի հոտին մեջեն քու թաց մազերուդ բույրը կզգամ... Ինչո՞ւ, ինչո՞ւ կտանջես ինձի:

ՍԵՊԱ — *Նկո՛ւր, եկո՛ւր:*

ԱՐԵՂԱՆ — *Ե՛տ տուր ինձի իմ հպարտությունս, իմ մեծամիտ խորհրդածություններս. ե՛տ տուր ինձի իմ հավատքս, իմ Աստվածքս. տո՛ւր, ե՛տ տուր ինձի իմ Աստվածս...*

ՍԵՊԱ — *Նկո՛ւր... եկո՛ւր...* (Ու կհաշվի, կաներևութանա աչ կողմի սյուններուն ետին):

248

2

ԱՐԵՂԱՆ — *Քնա՛ց նորեն, նորե՛ն մինակ... (Շենքի մեջտեղն է. կկենա, գլուխը կբարձրացնե, կնայի շարս դին ու զարմանալ) Աս ո՛ւր եմ ես: Աս ո՛ւր բերավ ինձի:*

Դուրսն կսովի հեռավոր աղմուկ ու ձայներ: Շտապ ներս կմտնե ծերունի պաշտոնյա մը՝ ձեռքին լույս ու արագ կվառե ջահերն ու մտները:

ԱՐԵՂԱՆ — (Հանկարծ մտենալով) *Ծերունի՛, ի՞նչ շենք է աս: ո՛ւր եմ ես:*

ԾԵՐՈՒՆԻՆ — *Վա՛յ, վախցա, արևը վկա: Ո՞վ ես դուն:*

ԱՐԵՂԱՆ — *Եկեղեցի՞ է, ի՞նչ բան է սա:*

ԾԵՐՈՒՆԻՆ — *Նկեղեցի՞. ի՞նչ հիմար լեզու կխոսիս: Զարդված-նեղու ու խաշվածներու տեղը չէ հոս, հանգիստ եղիր:*

Դուրսի աղմուկը հեռվեան կմտնես:

ԱՐԵՂԱՆ — *Ի՞նչ ուրախ է հոս, ի՞նչ տոնական:*

ԾԵՐՈՒՆԻՆ — *Անշո՛ւտ, կյանքը ուրախության համար է սը-*

ված մեղի:

ԱՐԵՂԱՆ — *Եվ ասիկա ըսողը ալևոր ծերունի մըն է:*

ԾԵՐՈՒՆԻՆ — *Այո՛, ծերանալը ծանր բան է: Բայց հոգիս առույզ է դեռ ու սիրտս երիտասարդ. դեռ կրնամ վայելել կյանքը և վայել-*

լի մ պիտի, արևս վկա, քանի շունչ կա շրթունքիս: Իհարկե՛, ըլլալ քեզի նման երիտասարդ, ա՛, մեծ բախտ է: Ափսո՛ս որ ետ շեն զատնար այդ խեթ ու անզուսպ օրերը: Ըհը՛, եկա՛ն: (Կերթա դեպի աղմուկը):

ԱՐԵՂԱՆ — (Կհաշվի ետ-ետ ու կծածկվի սյուններու սավերին հետը):

3

Ձախ կողմի խորքի սյուններուն մեջեն ներս կմտնեն Իշխանը իր պենդեկներուն հետ՝ երեսուն հոգիի ջափ. աղչափ մըն ալ մեկե-նական աղջիկներ. այն խուսք մը պիտակիք պատանիներ՝ ջահեր բռնած: Շենքը կողովի լույսով: Այրերը սաղավարտ ունին, վահան,

249

մեջքերուն սուր: Կտնալք հազված են թերև ու սպիտակ, մազեր-
նուն մեջ իբրև դարդ խրած ունին ասող մը:

Ամենն ասաջ ներս կմտնեն քանի մը ջահակիր ու խումբ մը
աղջիկներ ուրախ ու ոգևորված: Ետքը Իշխանը՝ շրջապատված իր
մեծերեն: Ասոնց ետևեն այ՛ վիսվորականներն ու աղջիկները խառն,
ուրախության բացականություններով, ջահակիրներ քովերեն ու
հասկեն:

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ — (Սյունեհեն ներս ստի
գնելուն պես) Կեցցե՛ն հաղթողները... Կեցցե՛ն բաշերը...

ԲՈՒՂՐ ԿԱՆԱՅՔ — Կեցցե՛ն, կեցցե՛ն հաղթողները:

Իշխանը կերթա կանգ կառնե բագինն առջևը, բոլորը կըխոսին
անոր ետևը: Աջ կողմի խորքի սյուներուն մեջեն դուրս կուգա բուրմ
մը՝ ձերմակներ հազած. ուրիշ երկու բուրմ աջեն ու ձախեն:

ՔՈՒՐՄԸ — (Գալով իշխանին ընդատոյ) Բարի գալուստ իշխա-
նին: Բարի գալուստ մարտնչայնկերս:

ԻՇԽԱՆԸ — Եկեր ենք մեր զներերը դեկու Քաշն Վահագնի
բազնին սարր ու իր սարր ծագումը երկրորդանք:

ՔՈՒՐՄԸ — Իր սարր ծագումը ձեզի գորավիզ, ձեր թևերը
միշտ ամուր, ձեր սուրերը միշտ հատու, ձեր վահանը անխորտակ:
Լույս ու արև Վահագնի օրհնությունը ձեզի հետ, դո՛ւր, որ հաղթող-
ներն եք կյանքի կովին մեջ, ձերն ըլլա միշտ հաջողությունն ու
հաղթանակը:

ՋՈՐԱԿԱՆՆԵՐԸ — Հաջողությունը մեզի հետ, հաջողությունն
ու հաղթանակը:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — Քաշն Վահագնի օրհնությունը ձեզի հետ:

ՔՈՒՐՄԸ — Գեա բավական ժամանակ կա մինչև մեր լույս Տի-
րուշ ծնունդը, իշխա՛ն: Նստեցե՛ք ու հանդատացե՛ք: Նստեցե՛ք Մեծն
Վահագնի ու Մեծն Աստղիան սեղանը: Նստեցե՛ք ու վաշեցե՛ք,
դո՛ւր, որ կովորներն եք կյանքի մեծ կովին մեջ, կովորներն ու
հաղթողները, ձե՛րն է հաղթությունը, ձե՛րն է վաշելը:

ՋՈՐԱԿԱՆՆԵՐԸ — Մե՛րն է հաղթությունը, մե՛րն է վաշելը:

ՔՈՒՐՄԸ — Բացե՛ք, աղջիկնե՛ք, Տիրուց սեղանը, բացե՛ք Վա-
հագնի ու Աստղիան սեղանը: Բերե՛ք գինի անսողական և ուրախու-
թյուն, բերե՛ք ձեր գեղեցկությունն ու ձեր նազանքը, բերե՛ք, մինչև
250

արժանանանք Երկրորդանք լուսածին Վահագնին ու փրփրածին
Աստղիան: Բացե՛ք, աղջիկնե՛ք, վաշելքի սեղանը: (Իր երկու ընկեր-
ներուն հետ կելլեն դուրս):

Իշխանն ու իր զենքակերները կհանեն սաղավարտինն ու վա-
հանները, կուսան գինակիրներուն, որոնք կառնեն ու սյուներուն
մեջեն կտանին դուրս: Աղջիկներուն մեկ մասը կվապե ձախ սյունե-
րեն դուրս, կբերեն ծաղիկներ, առատ շաղ կուսան քարե սեղանին,
կբերեն սեղանի բազմաձյուղ աշտանակներ և գինիով լեցուն արծաթե
սվապաններ, կբերեն ոսկի ու արծաթ թասեր, բաժանիկներ և եղջյուրե
գալստուն ըմպանակներ:

Այդ պատրաստության միջոցին է, որ կխոսվի:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ — (Ասաջ գալով) Բայց կո՛վ էր:
տա՛ք կո՛վ:

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ — Թող անպակաս ըլլա կյանքեն սուրբ կո՛վը:

ԵՐԻՏԱՍԱՐԳԸ — Սարսափելի շարդ կերան:

ՈՒՐԻՇ ՄԸ — (Կատակով) Կմեղքնա՛ս, թող խնայելի՛ր:

ԻՇԽԱՆԸ — Աս ս՛վ է, որ խնայելու մասին կխոսի: Երբե՛ք,
որդինե՛քս, կյանքի կովին մեջ շինայեք Լըբե՛ք և ո՛չ ոքի: Խնայելը
թուլություն է, մեղքնալը պարսություն: Զարկե՛ք, ով ձեր զեմն է,
ով ձեր ճամփան կգոցի: Ով որ քեզի կարգիս՝ բու թշնամիզ է:

ԵՐԻՏԱՍԱՐԳԸ — Զարկե՛ք, հաղթողը մենք ենք:

ՈՒՐԻՇ ՄԸ — Ի՛նչ լավ է հաղթող ըլլալը:

ԵՐԻՏԱՍԱՐԳԸ — Հաղթող ըլլալ ու կովեն գառնալ:

ԻՇԽԱՆԸ — (Երբալով սեղանին գլուխը) Գե՛, հիմա եկե՛ք նըս-
տինք, Տիրուց սեղանը, արդար հատուցում մեր դաժան կովին:

Աղջիկ ու գորական խառն կնատին: Աղջիկներեն շատերը կը-
ման օտքի, կմտնեան ու կմտայեն մեկուն-մյուսին, մեկ-երկուքը
կերթան կուգան: Ձիուակիրները կշարվին իրենց աներուն ետևը ու
կարձանանան:

Բազմության կեսը նստած է արդեն, կեսը դեռ օտքի, որ կխոսվի:

ՋՈՐԱԿԱՆ ՄԸ — (Բաժակը վերցնելով) Կեցցե՛ կո՛վը:

ԿՈՂՔԻ ԱՂՋԻԿԸ — Կեցցե՛ք կովորը:

ԴԵՄԻ ԶՈՐԱԿԱՆԸ — Կեցցե՛ք զեղեցկությունը:

ՈՒՐԻՇ ՄԸ — Կեցցե՛ք սերը:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — Կոխվը կյանքն է աշխարհի:

ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ — Սերը վայելքն է աշխարհի:

ԻՇԽԱՆԸ — (Միծաղելով) Կեցե՛ք, կեցե՛ք. մի՛ շտապեք. է՛յ, դո՛ւք, կո՛խվ, է՛յ, դո՛ւք, սե՛ր: Մի՛ բռնկիք այգպես շուտ: Նստեցեք հանդիստ. հպատակվինք հին կարգին: Քասերը պատրա՛ստ, մեր մեծ Աստծուն ձեռն եմ ձոնելու:

Աղջիկները գինի կեցնեն թատերը մեջտեղի գինիի ավապաններն: Խոր լուսթյուն:

ԻՇԽԱՆԸ — (Վերցնելով գինիի մեծ եղջյուր մը՝ կերթա կկենա բազնին առջևը, դեմքը դեպի վարագույրը դարձուցած ու գինին բարձր պահած) Քեզի՛, ով մեծոք Աստված, Վահագն արի, դուն արևը աշխարհի, դուն կյանքն ու աշխույժ, դուն կոխվ և ուժ, դուն լույս ու զտող, ազնիվը զատող, փառքը պատող, դուն, որ հաղթեր ես վատի, իսավարի, ամեն մոռյլի, այլև երկնքին, սև ամպ ու թուխպին, դեկն, վիշապին, աշխարհի ափին, քեզի՛, այգածին, ճառագայթածին, քեզի կձոնեմ այս վայելքի եղջյուրը՝ լիքը ազնիվ արքեցնող գինիով, դո՛ւն, որ ապրելու ու կովելու արքեցումը կուտաս մեզի: Տե՛ր, ընդունե՛ մեր ձոնը: (Մեկ-երկու կարիլ կթափե կրակին. ուժեղ ու պայծառ բաց):

ԶԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ — Ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է...

ԻՇԽԱՆԸ — (Դառնալով իր տեղը) Հաղթողի ձոնը հաղթողի բազնին վրա մի՛շտ է ընդունված: Խմե՛նք: Կեցցե՛ կյանքն ու իր կոխվը:

ԲՈՂՈՐԸ — (Աղմուկով ու իրաբանցումով, նստած, կեցած, բասերը իրարու բախելով) Կեցցե՛ կյանքն ու իր կոխվը:

Կիսմեն ու կնստին. լուսթյուն:

ԱԲԵՂԱՆ — (Դողդոջուն քայլերով առաջ կուգա, ամշկոտ վառակով հայացքը գետին, ձեռքը առաջ մեկնած) Տվե՛ք թաս մըն ալ ինձի: Ես ալ կուզե՛մ:

Ընդհանուր պարմանք ու խոր լուսթյուն:

ԻՇԽԱՆԸ — Դո՛ւն հոս ինչ գործ ունիս, սևազգե՛ստ:

ԱԲԵՂԱՆ — Տո՛ւր թաս մըն ալ ինձի. ես ալ կուզե՛մ:

ԻՇԽԱՆԸ — Այս եղջյուրին խմել ուզողը կովեն պետք է, որ պա:

ԱԲԵՂԱՆ — (Աղաչավոր) Մե՛կ թաս մը միայն, իշխան, ի՛նչ մեծ բան է որ: Անդամ մը միայն, մեկ ո՛ւմպ մը միայն քու այդ կովի ու վայելքի եղջյուրեզ:

ԻՇԽԱՆԸ — (Արհամարհոտ) Տիրոջ սեղանին վրա, ա՛յ թշվառ, սշինչ չի ստացվիր աղաչանքով, գնա՛ մուրացիկներուն սեղանը:

ԶՈՐԱԿԱՆ ՄԸ — (Մաղբով) Է՛յ, բարեկամ, ո՞ր հովերն են քեզի այս կողմը նեատր:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԸ — Գինիի հոտ է ինկեր ծոմ պահողին քիթը:

ԻՇԽԱՆԸ — Տարին տասը շափ ցորեն նվիրեր եմ ես իմ կալերես ձեր անապատին. գնա՛ նստե ու կե՛ր:

ՀԱՍԱԿԱՎՈՐ ՄԸ — (Մաղբով) Ու աղոթե՛ քու աստվածներուց մեր մեղքերուն համար:

ՀԱՍՏ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ — ՄԷ՞ղք... (Փորը բռնած սաստիկ կկրկնողա) Ազոթե՛, աղոթե՛ մեր մեղքերո՛ւն համար... անթիվ մեղքերուն...

Ընդհանուր հեռոց:

ԱԲԵՂԱՆ — Իշխան. դուն ինձի չե՛ս ճանչնար:

ԻՇԽԱՆԸ — Ա՛յսպես ալ աներես մարդ: (Բարկացած) Պիտի հեռանա՛ս, թե չէ:

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ — Ես կճանչնա՛մ քեզի, ե՛ս: Դուն այն ցած վատկոտը չե՛ս, որ սուրդ նեատր ես դեատին ու փախեր ես կյանքի կովեն:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԶՈՐԱԿԱՆ ՄԸ — Դո՛ւրս, հայգե՛, ցա՛ծ արարած:

ՈՒՐԻՇ ՄԸ — Դո՛ւրս, վախկո՛տ:

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ — Դուն այն մեծամիտ տիմարը չե՛ս, որ կարհամարհես մեր վե՛հ Վահագնի նվիրած ամենեն վե՛հ նվիրը՝

կյանքը. և ըստ թշվառ գլուխդ շնուզեր խոնարհել անոր լույս պատկերին առջևը:

ԲՈՂՈՐԸ — Կորսվե՛, կորսվե՛ դուրս:

ՄԵԿԸ — Կորսվե՛ դուրս այս սուրբ վայրեն:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԸ — Աստվածուրա՛ց:

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ — Դուն այն ամբարտավանը շն՛ս, որ երկրորդ գեղ շնուզեր մեր փրփրածին Աստվածուհիին, ո՛չ անոր նվերը եղող սիրուն, ո՛չ ալ կնոջ գեղեցկութեանն ու հմայքին:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — Դու՛րս այդ ամբարտավանը:

ԱՂՋԻԿ ՄԸ — Ապո՛ւշ...

ՀԱՍԱԿԱՎՈՐԸ — Դուն այն սրբապիղծը շն՛ս, որ կարհամար- շնս մարմինը, վահագնի ու Աստղկան այդ հրաշալի կերտվածքը:

ԱՂՋԻԿ ՄԸ — (Քովի տղան մատնանիշ) Արհամարհե՛լ այս մարմինը. այս առո՛ղջ, այս ճկո՛ւն, այս ո՛ւժեղ մարմինը:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — Սրբապի՛ղծ...

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԸ — (Քովի աղջիկը մատնանիշ) Այս բնքո՛ւշ, այս գեղեցի՛կ, այս հոյակա՛յ մարմինը:

ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ — Սրբապի՛ղծ:

ԱԲԵՂԱՆ — (Սման հարձակման ավելի ու ավելի խորակված, ավելի ու ավելի գլուխը վար կկախե ու կայլ-կայլ կհաշվի ետ: Վերջին խոսիերուն մտած է առջին իր նախորդ տեղը՝ սյունեռան ետևը ու ալ շերտաբ):

6

ԻՇԽԱՆԸ — Թողե՛ք, թողե՛ք կորչի: Ես ձոն ունիմ ձոնեկու: Առե՛ք թասերը:

Բոլորը կեցնեն:

ԻՇԽԱՆԸ — (Եղբայրք առած կերքա նորեն բազնին առջև ու զինին վեր բարձրացնելով) Քեզի՛, ո՛վ վեհո գիցուհի, ո՛վ փրփրածինդ Աստղիկ, դո՛ւն, որ անարատ ես ու սքանչելի, թու կլած փրփուրիդ նման. դո՛ւն վերին գեղեցկութեան, դո՛ւն գերագույն հմայք ու բնքոթյուն, թու աված լույսիդ նման: Դո՛ւն, որ աղբյուրն ես սիրու, հույսերու և հուզումներու, քեզի օրորող ալիքներուն նման, քեզի՛, ձովածին, քեզի՛ կնվիրեմ այս վայելքի եղբայրք՝ լիքը ազնիվ ու արբեցնող գինիով, դո՛ւն, որ գեղեցկութեանն ու սիրու վա-

յելքը, հեշտանքն ու արբեցումը կուտաս մեզի: Ընդունե՛, գիցուհի՛. իմ ձոնս: (Մեկ-երկու կաթիլ կքափե կրակին. ուժեղ ու պայծառ բող):

ՁԱՅՆԵՐ ԱՄԵՆ ԿՈՂՄԵՆ — Ընդունվա՛ծ է... ընդունվա՛ծ է...

ընդունվա՛ծ է...

ԻՇԽԱՆԸ — (Գտնելով իր տեղը) Հաղթողի ձոնը մի՛շտ է բն- դունված գեղեցկութեան բազնին վրա: Խմե՛նք: Կեցցե՛ գեղեցկու- թյունն ու սերը:

ԲՈՂՈՐԸ — (Ազմուկով ու ծիծաղով, կատակներով, ըմպանակ- ները իրարու բախելով) Կեցցե՛ գեղեցկութեանն ու սերը:

Կյանն ու կատին. լուսթյուն:

7

ԱԲԵՂԱՆ — (Դուրս կելլե իր անկյունեն և վեռական կմոտենա Հաստ գինվորականին, ձեռք կդնե անոր ուսին ու կտրուկ) Տե՛ղ սուր ինձի:

Ընդհանուր զարմանք:

ՀԱՍ ՋՈՐԱԿԱՆԸ — Նորե՛ն, ա՛յ մուրացկան:

ԱԲԵՂԱՆ — (Ավելի կտրուկ ու լսեթ) Ծ՛ս ալ կուզեմ նստիմ այս սեղանին:

ՀԱՍ ՋՈՐԱԿԱՆԸ — Քեզի տեղ չկա այս սեղանին:

ԱԲԵՂԱՆ — (Իրգոված ու զողալով) Ես պե՛տք է նստիմ այս սեղանին:

ՀԱՍ ՋՈՐԱԿԱՆԸ — Տեղ չկա՛ ըսինք քեզի. սուր լուսեցողին հոս տեղ չկա. ի՞նչ ես կպեր, ձիո՛ւ ճանն:

ԱԲԵՂԱՆ — (Հանկարծ կփաթթվի Հաստ գորականի մարմնին, կվերցնե նստարանեն, կզլառե գետին):

Նայս ընդհանուր անբարեհաճ հուզում ու իրարանցում, որը սակայն հանկարծ տեղի կուտա բուն ու միահամուռ ծիծաղի մը:

ԱԲԵՂԱՆ — (Մունկը կդնե նստարանին ու բռունցյալ սեղանին գառնելով) Ես պետք է նստիմ այս սեղանին:

ՀԱՍ ՋՈՐԱԿԱՆԸ — (Վեր կբռչի կատաված, կհաշն սուր ու

կլազե Աբեղային վրա) Անդի'ն, անզգա'մ, չեմ ուզեր պղծել այս սուրբ մեհյանին գավիթը քու պիղծ արյունովդ:

ԱՐԵՂԱՆ — (Հաստատ ու ծանր ֆայլերով կլմտեմա անոր: Վայրկյան մը շեջտ կզիտեմ իբար մոլեգին: Հանկարծ Աբեղան բո- յար ուժովը կգարեն դիմացինի թևին, արուն սուր կիյնա վառ: Արե- զան իսկույն կխլե ու նորեն ծունկը դնելով նստարանին) Ահա', իշ- խա'ն, և իմ սուրս:

Ընդհանուր սգևորություն. աղմուկ, հիացում:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — (Իբարու) Ի'նչ ուժ, ի'նչ ուժ...

ԱՂՋԻԿ ՄԸ — Ի'նչ երկաթի ձեռք:

ՀԱՍՏ ՉՈՐԱԿԱՆԸ — Ո'չ, իշխա'ն, դուն տեսար բռնությունը, դուն բոլորը տեսար. իմի'նս է այդ սուրբը:

ՉԱՅՆԵՐ — Ո'չ, ո'չ. ալ ո'չ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉՈՐԱԿԱՆ ՄԸ — Քու մեջքդ դպավ գետին:

ԻՇԽԱՆԸ — Սուրբ անորն է, որուն ձեռքը որ է:

ԲՈՂՈՐԸ — Ապրի' մեր արդար իշխանը:

ՉԱՅՆԵՐ — Ապրի' մեր նոր ընկերը:

ՄԵԿԸ — (Մտտեմալով պարավածին) Կներն'ս, բարեկա'մ, բայց կտեսնես, որ քեզի այլևս տեղ չկա հոս:

ՀԱՍՏ ՉՈՐԱԿԱՆԸ — Աղե'կ, ես կերթամ, բայց մենք դեռ կպա- տահինք, սեւազգե'ստ. կա'մ սուրս կուտաս ինձի, կա'մ կյանքդ:

ԱՐԵՂԱՆ — Կյանքս՝ դուցես:



ՉԱՅՆԵՐ — Գինի տվե'ք հաղթողին:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ — Վերցուր անոր թասը: Հիմա ան ալ քուկդ է:

ԱՐԵՂԱՆ — (Կտունե Հաստ գորականի ըմպանակը և կնեսե անոր ետևեն) Ես չեմ ուզեր ուրիշին խմուկը:

ԱՂՋԻԿ ՄԸ — (Թեք երկարելով) Ա'ո, քա'ջ, ի'մ թասս:

ԱՂՋԻԿՆԵՐԸ — (Սրկեցնելով իրենց թասերը) Ա'ո իմ թասս... ա'ո իմ թասս... առ իմի'նս...

ԱՐԵՂԱՆ — Իշխա'ն, քիչ մը առաջ ես քու եզջուրդ խնդրեցի, ա'յն եզջուրդ, որով ձոնդ ձոնեցիր:

ԱՐԵՂԱՆ — (Սաստիկ վիրավորված) Հա'յր...
ՎԱՆԱՀԱՅՐԸ — Անշո'ւշտ, շատ բնական է: Այդ բոլորի համար արժե աստված մը ուրանալ: (Հանկարծ ու բարկուրյամբ) Բայց ինձի', ինձի' ինչու ես կանչեք հոս:

ԱՐԵՂԱՆ — (Հանդիմանորեն) Հապա ո'վ կանչեի, վանա- չա'յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Սխալվե'ր ես: Կանչե' հայր Անտոնը:

ԱՐԵՂԱՆ — Վանահա'յր...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Հայր Անտոնին լասուր միայն կհանե քեզի՝ հոն, ուր քու սիրտդ է:

ԱՐԵՂԱՆ — Կվոնդես ինձի գո'րս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ես կզրկեմ քեզի քու տենչացած աշխարհը:

ԱՐԵՂԱՆ — (Դասն ու նամակիս) Կզրկես ինձի իմ աշխարհը իսկ ո'վ իրավունք տվավ քեզի՝ ուզած ժամանակդ գուրս բաշխե ինձի աշխարհեն, ուզած ժամանակդ ետ նետես աշխարհ: Ո'վ քե- ղի իրավունք տվավ, որ կապես հոգիս, կապկպես սղացու՞մներս: Ո'վ քեզի իրավունք տվավ, որ հիմա ելիր ես երեսիս հանդիմա- նություն կկարգաս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կտուրված) Իրա'վ ես: Ես ուզեի եմ անկարե- լին: Ես ուզեի եմ ազատեմ քեզի այն երկար դալարուն ճամփեն, որու զանոնություններուն ու տառապանքներուն մեջեն միայն կհոս- նին մարդիկ այս սուրբ մենարանը: Ես ուզեի եմ անկարելին: Հոնե՛ քուրձերդ ու դեռ:

ԱՐԵՂԱՆ — Երթա'մ. ինչո'ւ. և ո'ր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Աշխարհ:

ԱՐԵՂԱՆ — Աշխարհ... (Անխոս գլուխը կշարժե. և ապա շա- րովանդաց) Ո'չ, վանահա'յր, հո'ս է իմ աշխարհս. աշխարհքը, ա'յ, այս կղզին է. ես հո'ս ճանչցա հին աստվածները, հո'ս ալ պիտի երկրպագեմ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Նախ գարմանով կզիտե, վերջը ծանր ու վնասկաճ) Ո'չ. այդ մեկը չե'մ թողնել, արեղա':

ԱՐԵՂԱՆ — Կթողնե'ս. դո'ւն ես այդպես կամեցեր: Ես ուրիշ աշխարհ չեմ տեսած, ես հո'ս եմ շինել իմ աշխարհս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կտուրկ) Լսե': Հոս մենարան է ու սրբավայր, ուր այլևս աշխարհիկ հյուր մըն ես դուն, պատահական ուխտավոր

մը Իսկ ուխտավորներուն իրավունքը, գիտե՛ս, երեք օր է միայն (Դեպի դուար):

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Նստեն) Վանահայր, շատ ես խիստ:

ՎԱՆԱԿԱՆՅՐԸ — (Կիսովին նայելով) Ո՛չ, հա՛յր-սուրբ, հիվանդ էր ու զիջող եղաւ Ձի լսեցի՛ր, ամբողջ երեք օր տվի իրեն: Բայց երեք օրը չի լրացած պետք է հայր Անտոնին լաստը ցամաքը հանն այդ աղան: (Դուրս):

4

ԱՐԵՂԱՆ — Լա՛ստը... լա՛ստը:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Մոոցի՛ր, մոոցի՛ր այն լաստը, արեղա՛: Մոոցի՛ր քեզի աշխարհին կապող այդ երեքուն կամուրջը, մոոցի՛ր այդ իրարու կապված երկու գերանի կտորը...

ԱՐԵՂԱՆ — Իրարու կապված... այո՛... իրարու կապված:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Գեո ուշ չէ՛. խեղդե՛ մեզդ այդ շուշերը, քնկճն հին դեր ու այս բոլորը թող դանա հիվանդութուն մը, որ եկավ վրադ ու անցավ: (Թևերը տարածելով անոր վրա) Ապազինե՛ Աստծուն, արեղա՛: (Կերքս դեպի դուրս և կես համփեն) Գիշերը եթե պետք ունենաս՝ դարկ պատը, դամ քեզի օգնելու:

ԱՐԵՂԱՆ — Ինձի ի՞նչ կրնաս օգնել դուն, կի՛ւր. դո՛ւն, որ հա՛ներ ես քու սեփական աչքերդ:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Խաբխափելով մուտք կիներե) Կօզ-նեմ կերպ մը, արեղա՛, խարխափելով, խարխափելով... Զարկ պատը, եթե պետք ունենաս: (Դուրս):

5

ԱՐԵՂԱՆ — (Նստած է անկողնին մեջ ծուկերը գրկած. Ինչ մը ատեն լուռ ու անշարժ. վերջը հեզճառ ու գլուխը շարժելով) Խարխափելով... խարխափելով... և կըսե՛ մոոցի՛ր լաստը:

ՍԵՂԱ — (Դուռն մեքեն հագրվ կնշմարվի) Մոոցի՛ր, մոոցի՛ր լաստը...

ԱՐԵՂԱՆ — (Ցնցվելով ու շշուկով) Սեղա՛...

ՍԵՂԱ — Մոոցի՛ր և Սեղան:

ԱՐԵՂԱՆ — Ես մոռնամ քեզի՛:

ՍԵՂԱ — Մոոցի՛ր ինձի. ես քու մեջի սե դեմ եմ:

ԱՐԵՂԱՆ — Դուն իմ հոգիիս ճերմակ թևն ես: Նստեր էի անապատի ափազին վրա տխուր, շոր ու մինակ, դո՛ւն էիր, որ եկաք թև տվիր կյանքիս, բնությունը տվիր զղայարանքներուս ու ծովը սրտիս. ի՞նչ վր, ուրիկ արևները կծնին, ուր ես անգամ մը գրկեր եմ քեզի:

ՍԵՂԱ — Մոոցի՛ր, մոոցի՛ր այդ բոլորը. դեռ ուշ չէ՛. կզի՛ր նորեն ան, ինչ որ էիր. մտածե՛. դեռ ամբողջ երեք օր տվին քեզի:

ԱՐԵՂԱՆ — Ո՛չ, Սեղա, ո՛չ, ետ դարձ չկա. ո՛չ կրնամ, ո՛չ կուզեմ. ես երկրպագեցի քու աստվածներուդ, ես ձոնեցի քու աստվածներուդ, ես խմեցի վայելքի եղջյուրին: Ես հիմա միայն քեզի ծարավ եմ, ես հիմա միայն քու զիրկի կուզեմ:

ՍԵՂԱ — (Քիչ մը առաջ զայրով գրկարաց) Սկո՛ւր, ես քու կի՛նդ եմ:

ԱՐԵՂԱՆ — (Ինճն ալ անկողնին վրայն առաջ ծուկելով) Սեղա՛... բայց չէ՛ որ դուն երազ մըն ես:

ՍԵՂԱ — Սկո՛ւր, դո՛ւն ալ դարձիր երա՛զ մը:

ԱՐԵՂԱՆ — Երա՛զ մը:

ՍԵՂԱ — Սկո՛ւր նորեն հո՛ւն...

ԱՐԵՂԱՆ — (Վախցած ու հափշտակված) Մո՛վր...

ՍԵՂԱ — Հո՛ւն, ուր անգամ մը գրկեր ես ինձի...

ԱՐԵՂԱՆ — Ուր դուն թեկուս մեջ կողոպտիր քու մարմնիդ բոլոր մասնիկներով...

ՍԵՂԱ — Ուր ալիքները կողոպտին ու փոթորիկը կզոտար...

ԱՐԵՂԱՆ — Ու գարկերուս տակ փրփուրը կեռար...

ՍԵՂԱ — Հո՛ւն եկուր, հո՛ւն, եթե նորեն գրկել կուզես ինձի, միայն հո՛ւն. Սկո՛ւր, հենց որ նորեն ջրերը հուզվին, հենց որ նորեն ծովը փրփրի:

ԱՐԵՂԱՆ — (Հեազճեստե ծուկի գալով անկողնին վրա) Այո՛, երբ որ ջրերը հուզվին, երբ որ ծովը փրփրի...

ՍԵՂԱ — Սկո՛ւր, փաթթվի՛ք իրարու ու տանիմ քեզի դրկիս մեջ անդունդն անդունդ, մթնուտրտե մթնուտրտ, տանիմ քեզի դեպի նոր անձանոթները, դեպի այն նոր աշխարհները, որոնց մասին ցու ու քու աշխարհդ գաղափար անգամ չունիք: Սկո՛ւր:

ԱՐԵՂԱՆ — Կուզա՛մ: Առաջին անգամ, երբ քեզի գրկեցի, բաց-

Վեցան ինծի որբան, որբան անծանոթներ. դա՛մ նորեն քեզի զըր-
կելու և թող բացվին նո՛ր անծանոթներ:

ՍԵՄԱ — Եկո՛ւր, տանիմ քեզի հետո՛ւ, հետո՛ւ բու կյանքիդ նեղ
աահմաններեն, տանիմ քեզի նո՛ր գոյության, նո՛ր ձևերու, նո՛ր
էության...

ԱԲԵՂԱՆ — (Վերացած) Նո՛ր, նո՛ր կյանքի, նո՛ր էության:
ՍԵՄԱ — Եկո՛ւր, ձուլվիս ծովին, ձուլվիս լուսին ու ջերմու-
թյան, ձուլվիս ինծի ու Աստղիան, ձուլվիս Վահագնին ու աստված-
ներուն...

ԱԲԵՂԱՆ — Ա՛խ, շո՛ւտ, ա՛խ, շո՛ւտ:
ՍԵՄԱ — (Ետ-ետ քաշվելով) Հե՛նց որ ջրերը հուզվին, հե՛նց
քր ծովը փոթորկի...

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

ԵԿԵՆՅԻՆ ԱՌՋԻՎ ԶՐԱՅԱՐԱԿ

Նույնը, ինչ որ առաջին տրարի երկրորդ տեսարանը:
Յերեկ է:

1

Վանախանները խոնված են ու կխոսին հուզված: Արեղան լուս
ու կեդրոնացած է ծառի մը հենած:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — (Ապշած) Ի՞նչ կըսես, Ի՞նչ
կըսես...

ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — Ո՞վ էր լսեր այս տեսակ բան:
ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Մաղբով) Հա՛, հա՛, հա՛, վանահայրը
խոսվեր է եկեղեցիեն:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Վերջ տուր այդ անպատկառ ծիծաղիդ:
ՈՐՐԻՇ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Բայց իրա՛վ է, որ ալ ժամ չի գար:

ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛ւր է հիմա ինքը:
ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Քաշվեր է իր խուցը: Կկարդա՞, կաղոթե՞,

ա՞վ գիտե:
ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Ա՛, այդ կարդալը, կարգալը Չէ, այս
բուրբն աղվոր հոտ չի գար:

ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Մերունի՛, մաածե՛ր ես՛ ինչ կխոսիս:
ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — (Հետևալով) Ես բան չբսի:
ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Մեր մեծագո՛րն է, մեր առաջնո՛րգը:
ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Ես բան մը չբսի: (Իտու):
ՍԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Ետևեմ դուրս ելլելով) Կեցի՛ր, հա՛յր-

տուր, կեցի՛ր:
ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Մտածկոտ) Ճիշտ է. ամբարտաժանու-
թյունը մեղք է մահացու:
ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — Մարդս պեսք է հեզ ըլլա ու խոնարհ:
ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Խոնա՛րհ, խոնա՛րհ...

Ու երեքը միասին կեցին դուրս:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Տեսակ մը ինքնին) Վանահայրը խոս-
վեր է եկեղեցիեն... (Միծաղը ափին մեջ խեղդելով անհեց ետևեմ
կելլե դուրս):

2

ԱԲԵՂԱՆ — (Միշտ իր ծառին տակը՝ անշարժ):
ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Ետխորդ խուսբեն միակ մնացողը-
նախ քիչ մը կմնա մեջտեղը մտածկոտ. հաբ բան շնահցողի շառ-
ժուսով կորոհ գլուխը ու կմտտենա Արեղային) Կեցի՛ր, արեղա՛,
լսեցի՛ր:

ԱԲԵՂԱՆ — Կլսեմ, կլսեմ... Թո՛ղ ինծի, մի՛ խանդարեր՝ որ
լսեմ:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Ձարմացած) Ի՞նչը:
ԱԲԵՂԱՆ — (Խորք մտախանգելով) Ա՛յ, ահանջ դի՛ր:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Ի՞նչ է որ:
ԱԲԵՂԱՆ — (Խորհրդավոր) Ջրերը կհուզվին, ջրերը հուզվել
են սկսեր:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Է՛, ի՞նչ ընենք. երեի, գիշերը փոթորիկ
ենք ունենալու:

ԱԲԵՂԱՆ — (Սաստիկ հուզվելով) Փոթորի՛կ, փոթորի՛կ...
ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Անտարբեր) Գուցե՛, եղանակներ փոխ-
վեցան:

ԱՔԵՂԱՆ — (Հանկարծ բռնելով ընկերոջը թևեն) Ուրեմն այս գիշեր... կկարծես՝ այս գիշեր...

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Այդ ինչպե՛ս կդուրսուսես տե՛ղև արեղա, այն փոթորիկեն ի վեր, երևի, աչքդ վախցնո՛ւ է: Հանդատացի՛ր, հանդրատացի՛ր: Եկո՛ւր, երթանք եկեղեցի. աղոթե՛, սիրտդ կթեթևի:

ԱՔԵՂԱՆ — (Հանկարծ) Եկուր երթանք ափը:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Ա՛փը...

ԱՔԵՂԱՆ — Եկո՛ւր, տեսնել կուզեմ փոթորիկին գալը: Բայց... բայց առանձին չեմ կրնար: Գիտե՛ս, կբաշե, կարծես կբաշե, կբաշե... (Ամուս կսեղմվի ծառին):

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Արեղա՛, ավելի աղեկ է՝ երթաս ու պատկիս: Գեո իզուր ես ելեր ոտքի: Տե՛ս, աչքերդ կատարյալ տենդ ունին դեռ: Երթա՛նք, տանիմ քեզի խուցո՛ւ:

ԱՔԵՂԱՆ — (Մտախոս փոփոխվելով) Կամաց մը կիջեն ու կենտի Թո՛ղ, Թո՛ղ, Թո՛ղ ինձի: Թո՛ղ, ես տեսնել կուզեմ փոթորիկին գալը:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Կեցած է Արեղայի գլխուն՝ շիմանալով ինչ ընկ):

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — (Ներս վազելով) Վանահայրը, վանահայրը:

Կյսփին ձայներ, գազված աղմուկ ու մեկ-մեկ, երկու-երկու՝ խառն կմտնեն վանականները խոժոռ ու մտախոս: Կուգան ու լուռ կշարվին իրարու քով: Վանական մը կառաջնորդե կույրը:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Բայց ի՞նչ կա, է՛. ի՞նչ է պատահեր:

ԱՌԱՋՆՈՐԳՈՂ ՎԱՆԱԿԱՆԸ — Ըսի՛ շփոտեմ. վանահայրն է պատվիրեր:

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Սո՛ւս, եկա՛վ:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Արթնցնելու պես) Ոտքի՛, արեղա՛, վանահայրն է:

ԱՔԵՂԱՆ — (Գնայի շուրջը ու կելիև ստփի):

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կուգա խոբենե ծանր ու տխուր: Բուրբ գուլի կուտան: Էտա եկաք հայվածք մը կենտե խուճրի՛ն վրա): Բո՛ւրբ եր:

ՁԱՅՆ ՄԸ — Այո՛, վանահայր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Կնատի բարձր ֆաթի մը: Ապաստակալ լուրջուն) Բան ունիմ ձեզի ըսելու (Կմտածե): Կտեսնե՞ք այս եկեղեցին, որ գրեթե ավարտած է արդեն և ուր բավական ժամանակի ի վեր մեր աղոթքները կխնկենք մեր Աստծուն. այս եկեղեցին... այս եկեղեցին նվիրված չէ՛ մեր Աստծուն:

Ընդհանուր պարմանք ու շարժում:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Ի՞նչ ըսիր, վանահայր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այս եկեղեցին նվիրված չէ՛ մեր Աստծուն: Այս եկեղեցին, երբ ես կշինեի, ես դեռ կտրված չէի աշխարհեն... (Շշուկներ) Ես կկարծեի, թե կտրված եմ: Մենք բոլորս ալ, որ թողնե՛ր ենք աշխարհը ու եկեր անապատ, մեր հոգիին խորքը դեռ մեծ կտոր մը աշխարհք էինք բերեր մեզի հետ. ներքին վայելքի ծածուկ կտոր մը, քողարկված հաճույքներու բարակ ծարավ մը, մեր անկարող մը, քողարկված հաճույքներու ամբողջ նուրբ ու կաշուն ցանց դած կյանքի, կովի ու հուզումներու ամբողջ նուրբ ու կաշուն ցանց դած և ակամա վերհուշներ: Այս բոլորը դեռ մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կշինեիք: Այդ ծածուկ, քողարկված հուզումներն են շիտեր այս եկեղեցին, աշխարհեն անապատ եկած, մեզի հետ ներս սպրդած աշխարհի այդ կտորն է շինե՛ր այս եկեղեցին: Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր Աստծունը չէ՛: Ատոր կամարներուն տակ մենք այլևս աղոթել չենք կրնար. այդ կամարները պետք է քանդվին:

ՁԱՅՆԵՐ — (Ապշտ. սառսալիված) Քանզվի՛ն... քանզվի՛ն:

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Մեր եկեղեցին քանզվի՛:

ԵՐԻՏԱՍԱՅՐԳ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մեր նոր եկեղեցին քանզվի՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Այո՛. պետք է քանդե՛նք ու շինենք նորը:

ՁԱՅՆԵՐ — (Ձարմանկ ու ճեղքաբայուն) Նո՛րը... նո՛րը...

ԱԴԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Շինենք նո՛րը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Նո՛րը: Եվ այդ նոր եկեղեցին պիտի շինենք մենք ինքներս: Աշխարհեն եկած դրամը աշխարհիկ զգացումներու

նվերն է, աշխարհեն եկած վարպետները աշխարհիկ հասկացողութեան է, աշխարհի արվեստը: Մարդս ինք միայն կրնա շինել իր Աստծուն նվիրված տաճարը, ի՛ր մեջբովը, ի՛ր ձեռքերովը, ի՛ր խելքովը: Թե ինչ ձև է ունենալու մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ. ա՛լ, կնստինք միասին ու կխորհինք. կխորհինք ու կստեղծենք:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — (Հեզկու) Մենք ի՞նչ արհեստավորներ ենք, վանահայր. մենք ի՞նչ կրնանք շինել, դիցու՛ւք, եթե ուզենք ալ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կա՛մքք. ծերունի՛. ուղև ու կշիներս, եթե մանանխի շափ հաղատք ունենաս բու կամքիդ:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Է՛, անցեր են այն ժամանակները:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ո՛չ, չե՛ն անցեր. դեռ չե՛ն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիիս մեջքն պիտի երթանք գետի այդ ժամանակները:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Կսե՛, վանահայր. լսե՛ ինծի, ես ծերունի մարդ եմ: Գուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ: Քու բանած ճամփադ ծուռ ճամփա է: Մի՛ շարշարեր գլուխդ, այդ ճամփան հերետիկոսներուն ճամփան է:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հպարտ) Այդ ճամփան առաքյալներու ճամփան է. այդ ճամփով է անցեր ինքը Քրիստոս:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛ւ... կլսե՛ք:

Շշուկ ու վրդովում:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Մի՛ խոսիր այդպես անմիտ, վանահայր:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛չ ալ այդպես մեծամիտ:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Եվ ձգե հանդիստ մեզի ու մեր եկեղեցին. մեզի պետք չեն նոր ձևի շենքեր. այս ձևն է մեզի մեր պապերեն ազանդ հասեր:

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մենք ո՛չ քարտաշ ենք, ո՛չ վարպետ:

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Եվ չենք եկեր հոս պատեր քանդելու, պատեր շինելու:

ՈՒՐԻՇ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Մենք եկեր ենք հոս հանգստանալու:

ՂԱԶԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Այո՛, հանգստանալու ու աղոթելու:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Եվ ինչո՞ւ քանդենք մեր նոր

շինված սիրուն աղոթատեղին, ոչինչ չեմ հասկնար. մի՛ տքն ինչ է, ինչո՞ւ:

ՂԱԶԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Որուն վրա այսքան ծախս է թափվեր, այսքան աշխատանք:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Եվ ի՞նչ ըսենք իշխանին, իշխանուհիին, որոնք հողացր են բոլոր ծախքը:

ՁԱՅՆԵՐ — (Խառն) Իհարկե՛, իհարկե՛... իշխանը... իշխանուհին...

ՂԱԶԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Եվ ո՞վ կուտա այն ատեն տասը շափ ցորենը, պարենը, այսքան նվիրը:

ՁԱՅՆԵՐ — (Խառն) Իհարկե՛... իհարկե՛... ցորենը... պարենը...

ԱԳԱՄ ՎԱՆԱԿԱՆ — Հանգիստ թո՛ղ մեզի ու մեր ապրուստը:

ՂԱԶԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Քու շինելիք եկեղեցիդ հաց կուտա՞ մեզի:

ԳՍՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Որքան ալ ըլլա մեր սեղանը սակավ, բայց հաց պետք է, որ ապրինք:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Որ կյանքի հոգը շխեղդե մեզի:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Որ մեր աղոթքը շխանաբարի:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Ուշքի եկո՛ւք, վանահայր, քանի կանուխ է ու թո՛ղ մեր անապատը խաղաղ ու հանգիստ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Նայա շխարածի պես է այս տառապիին տակ, ետևը գոլիսը վեր կառնե, կնայի շրջապատողներուն տեսակ մը ապրուստով) Գուր... հոս իմ շարշու. ե՛ս... հոս կեցած ձեր մե-

յը... Ե՛ս ձեր վանահայրը, դո՛ւք իմ միաբանությունս, ի՛մ իսկ հիմնած: (Փայտուն) Միաբանություն, ի՞նչ միություն ձեր ու իմ մեջ...

(Աչքերը շվկով) Կարծես կապը կիշնա աշքերես: Ի՞նչպես է եղեր, որ ես չեմ հասկցր այսքան՝ պարզ բանը, այսքան ակնհայտի:

Մինչև հո՛ս, մինչև անապատ կրցրեր ենք մենք միասին: Մինչև հոս ես կրնայի բերել ձեզի, մինչև հոս կարելի է բերել մարդը, բայց

հոսկե անդին... հոսկե անդին մարդ ի՛նքը պիտի երթա: Ճշմարտության անդին... հոսկե անդին մարդ ի՛նքը պիտի երթա: Ե՛ս է ձեր եկեղե-

րիսը դո՛ւք եք. այդ եկեղեցին պետք է, որ մնա, ա՛ն է ձեր եկեղեցին, դասե՛ք, դացե՛ք ներս. ան կուտա ձեզի անվերջ աղոթքներ ու

մխիթարանք. ան կբանա ձեզի արքայություն ղոները, կազատե ձեզի բոլոր սատանաներեն, ան ձեզի ձեր հացն ալ կուտա ու ձեր

Հանգիստը. դացի՛ք, դացի՛ք ներս ու խաղաղությունը թող ըլլա
ձեզի հետ: Իսկ իմ փնտրածս ատիկա չէ. իմ փնտրածս աշխա-
տանքն է, ներքին անդու ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ
եվանգումները բարձունք-բարձունք, պարիսպ-պարիսպ, տարա-
կույսներու անդունդներուն վրային, ելքերով ու անկումներով. ան-
գաղար խոյանք մը դեպի ճշմարտությունը: Գացե՛ք, դացի՛ք ներս
դուք ձեր եկեղեցին, ևս ալ երթամ շինեմ ի՛մ եկեղեցիս. բայց այս
անգամ ե՛ս, միայն ե՛ս, և կերտվածք մը, որ վայել ըլլա իմ Աստը-
ծուս քնակությունը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղոթքիս
ո՛չ մեկ բառը կեղծ չճնշե, ո՛չ մեկ բառի արձագանքը դատարկ
չճնշե:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — (Մաղում) Աս ո՛ւր պիտի շինես, վանա-
հա՛յր, քու նոր կերտվածքը:

ՉԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Մաղում) Եվ ինչե՛. դրանի՛տ պիտի ըլ-
լա, թե՛ մարմարի:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Գրանիտ ու մարմար, սրձաքար ու ամեն տե-
սակ բար ևս կթողնեմ աշխարհի աստվածներուն: Իմ տաճարիս
հիմքը իմ բանականությունս պիտի ըլլա, սյունները իմ կամքս է, ու
գմբեթն ալ ըլլալու է հավատքս:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Շատ խախուտ է, վանահա՛յր, նոր
շենքիդ հիմքը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Անփույթ) Խախուտ է՛ կփի:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Եվ այն ատե՛ն...

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կշինեմ նորը:

ՍԵՐՈՒՆԻ ՎԱՆԱԿԱՆԸ — Բայց ատիկա վե՛րջ չունի:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Կուլեիր, որ վե՛րջ ունենար: Քանի կապրիք՝
շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստծուն իր տաճարը. շինենք ու
փլի, շինենք ու քանդենք. շինենք ու շինենք միշտ, բայց երբե՛ք,
երբե՛ք չավարտենք: Հենց որ ավարտի, ալ տաճար չէ Աստծու,
այլ... (Եկեղեցին մատնանիշ) կոտորուն:

ՉԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Գառադի) Կհայհոյե, կհայհոյե մեր
Աստծուն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ամենն ստոր հողիները միայն հայհոյել կըր-
նան այն Աստծուն, որուն երբեմն նրկրպագեր են: Բայց կտեսնեմ՝

ալ մենք իրար շենք հասկնար: Մնաք բարով, ձեր Աստվածը ձեզի
հետ:

Կույզ երթա՛ Աբեղան առաջ կուգա ու ճամփան կկտրե:

ԱՐԵՂԱՆ — Կեցի՛ր:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՛նչ է: Գուցե կուզես նորեն ինձի հետ, արե-
գա՛: Եկո՛ւր, քու հողիդ թոխը ունի, ևս գիտեմ:

ԱՐԵՂԱՆ — Կեցի՛ր: Ըսե՛, քու այդ նոր շենքեդ երևա՞ պիտի
արևի ծագումը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Մոռցի՛ր արևն ու իր ծագումը, որ ծագի քեզի
ծագումներուն ծագումը, որ արևն քեզի արևներուն արևը:

ԱՐԵՂԱՆ — Կեցի՛ր: Ըսե՛. քու այն նոր շենքեդ լավի՞ պիտի,
տե՛ս, այս աղմուկը... (Խուճը մատնանիշ ընկելով) Կտե՛ս:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Ի՛նչ աղմուկ. այդ լավալը ծովն է տիկնո՛ս:

ԱՐԵՂԱՆ — Այս՛, ատիկա՛:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Քու փնտրածդ, մանո՛ւկ, մարդու կառուցած
առաջին եկեղեցին է, նախնականը:

ԱՐԵՂԱՆ — Չէ՛, ալ ինձի շես խաբեր քու այդ արհամարհոտ
բառերովդ: Խոսե շիտակ. քե՛. հասնելու է քու եկեղեցիդ ծովուն
ձայնը:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — Իմ եկեղեցիս չէ հասնելու ո՛չ մեկ արտաքին
հուզում, ո՛չ մեկ արտաքին աղմուկ: Եթե կուզես ինձի հետ՝ հույսդ
կտրե արևն ու ծովն:

ԱՐԵՂԱՆ — (Ճամփա տալով) Անցի՛ր այն ատե՛ն:

ՎԱՆԱՀԱՅՐԸ — (Հեռանալով) Ափսո՛ս, արեղա՛, քու միտքդ
երբեմն թևեր ունի: (Գուրս):

ԱՐԵՂԱՆ — (Ետևեմ) Ափսոս, վանահա՛յր, քու սիրտդ երբեմն
թևեր ունի:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Երկու ձեռքեր առաջ պարզելով) Ե՛ս...
ե՛ս կույզի քեզի հետ...

ՉԱՅՆԵՐ (Շշուկով) Կո՛ւյզը... կո՛ւյզը...

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱԾ

ՔԱՐՁԲ ՄՈՎԱԿ

Այ ու ձախ ժայռեր: Քարքարոտ գետինը քիչ-քիչ կբարձրանա ու ճակատին կկապվե ծովուն սեպ շրթունքը:

Գիշեր է. այնպիսի:

1

Ժայռի շրթունքին այիքներուն կատաղի ելուշը:

Այիքները, որոնք կնոշ մարմին ունին, կերևան միայն մինչև մեքք ու կաշխատին կախվին ժայռեն, բայց վայրկյան մը միայն, իսկույն վար կթափին նորեն շառաչելով:

ԶԱՆԱԶԱՆ ԱՆԻՔՆԵՐ — (Թերե-բերան ու ընդհատ-ընդհատ)

- Պիտի կորչի՞ս:
- Տեղ սուր լանջիս:
- Քարի՛ն փակչիս:
- Ա՛յ, հասա՛նք, հասանք:
- Հոսա՛նք է, հոսանք:
- Ի՛նչ վաղեր ենք ափե-ափ:
- Ի՛նչ ցատկեր ենք շափե-շափ:
- Չա՛փ. ի՛նչ շափ:
- Անշա՛փ. անշա՛փ:
- Չա՛փ, շա՛փ:
- Աս թռչիլ է, վաղել չէ:
- Աս եռալ է, ցատկել չէ:
- Կեցի՛ր, կեցի՛ր ու կանչե՛:
- Չէ՛, չէ՛, անցի՛ր. աս ա՛ն չէ:
- Ա՛ն է:
- Ան չէ՛:
- Է՛, մեկ չէ՛:
- Կանչե՛, կանչե՛:
- Մենք պարտալ չե՛նք:
- Ոչի՛նչ, կանչե՛նք:
- Կանչե՛նք:
- Կանչե՛նք:

ԽՈՒՄՐ ՄԸ ԱՆԻՔ — (Միարեան)

- Հե՛յ, ահանջե՛.
- Հույզ ու տենչ է ամեն լանջե,
- կշառաչե.
- քեզի ծո՛վն է, որ կկանչե՛,
- հե՛յ, ահանջե՛:

ՈՐԻՆԾ ԽՈՒՄՐ ՄԸ — (Հեզմանքով ու հեռանալով)

- Ա՛, չէ՛, չէ՛, չէ՛.
- նստե հողին ու քեզ տանջե:

ՆԱԽՈՐԴ ԽՈՒՄՐԻՆ ԶԱՅՆԸ — (Ավելի հեռուեն)

- Հե՛յ, ահանջե՛.
- Հույզ ու տենչ է ամեն լանջե...

Ու քիչ մը ստեն ժայռի շրթունքին լուսթյուն՝ կտիրե. և ավելի սուշ կլավի բացերեն փոթորկի խոր ու խուլ աղմուկը:

2

ԱՔԵՂԱՆ — (Կողմնակի ժայռերուն մեջեն կենտրոն ելու. մազերը խոխով, հագուստը խառնակ, աչքերը մուր) Եկա՛, եկա՛... (Ու հանկարծ կկենա, կշփե հակառը, կնայի ետ ու կսկսի բարկացած շեշտով մը) Դե՛, մնա՛ս բարով, կզգի՛, մնաս բարով, անսպո՛տ, մնաք բարով, դուք ալ մութ-մութ կամարները տաճարին, մնա՛ք բարով, իմ աղոթքներս ու խնկումը հողիս. մնաս բարով և դո՛ւն, ո՛վ անողոր ու վրեժխնդիր Աստված, որուն ուղղեր եմ իմ տենչերս ու աղոթքներս: Դուն ալ մնաս բարով, խցի՛կս, իմ մենաՎոր ու լռիկ խցիկս, ալ չեմ դառնալու քեզի: Ա՛յ, դեռ կվառի հող՝ ծոցիդ մեջ՝ Երազիս աղոտ լույսը. առավան դեմ մինակը, մինակը մարի պիտի ու ալ երբեք չի պիտի վառի: Թո՛ղ մարի:

Հովի ուժեղ թափը:

ԱՔԵՂԱՆ — (Կցնցով՝ կդառնա ծովուն ու քեքր կարոտակեղ սուսը պարզելով) Դե՛, բա՛ց գիրկդ, Սեզա՛, բա՛ց թևերդ. ահա՛ հույզքը ջրերուն, ահա՛ վազքը փոթորկին. բա՛ց թևերդ ու նորեն փարած թու խնկելի մարմնիդ, նորեն շունչդ շնչիս, այիքներուն մեջեն, անցնիմ այն նո՛ր ու մե՛ծ անծանոթին, նոր գոյության ու նոր կյանքին. ա՛ն, որ խոստացեր ես ինձի: Բա՛ց գիրկդ, Սեզա՛...

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Վերի ժայռին վրայեն շիտակ անոր առ-
ջեր կցաակն ու կկտրե համփան հեարով) Կեցի՛ր: (Կարծիք սեղմե-
լով) Շունչս... շունչս...

ԱՐԵՂԱՆ — (Հանկարծակիի եկած ու խածո) Մեկդի՛ ճամ-
փես:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Կեցի՛ր, դժբա՛խտ, կեցի՛ր: Վախցի՛ր Աս-
տուծմե:

ԱՐԵՂԱՆ — (Կովի պատրաստվելով) Մի՛ կտրեք առչես:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Քու առչեդ մութ է ու անդունդ:

ԱՐԵՂԱՆ — Ե՛տ քաշվե, մա՛րդ:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Վախցի՛ր այդ մութին ու անդունդին:

ԱՐԵՂԱՆ — (Կատողած) Է՛, հերի՛ք է, հեռո՛ւ գացեք ձեր ան-
դունդներովն ու մութերովը, հեռո՛ւ ձեր անվերջ վախերովը: Վա՛խ
լուսերին ու բերկրանքին. վա՛խ մութին ու տանջանքին, վա՛խ
աստվածներին ու դժոխքին: Հեռո՛ւ, բա՛ց համփաս: Հոն ո՛չ մութ
կա, ո՛չ անդունդ: Յովն է միայն ու փոթորիկը իմ առչես:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Մահն է քու առչեդ, թշվառակա՛ն:

ԱՐԵՂԱՆ — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Աստվա՛ծ իմ, խելագար է:

ԱՐԵՂԱՆ — Մահը ա՛ս է, հո՛ս, ա՛յ, այս ձեր անապատը, այս
վախի ու մեռելափյան կյանքը. իսկ հոն ազատն է. հուշդն ու շար-
ժումը՝ հոն կյանքն է, և ես կուզեմ կյանքին գիրկը... (Հանկարծ
ուժով մը կհրե, կնետե գետին) Հեռո՛ւ ճամփես: Ես կուզեմ ապ-
րի՛մ, ապրի՛մ: Սեղա՛... (Կնեավի ծովը):

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Կես մը զեանեն բարձրանալով, սարսա-
փահար ու խեղդված ձայնով) Կորա՛վ. կորա՛վ իր հոգին...

Ժպտերուն մեջն հեռոցեան կեանին վանականները՝ հա-
զաստ ու մազեր հոգերուն:

ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — Ո՛ւր է, ո՛ւր է:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Գտա՞ր, ճի՛շտ է. տեսա՞ր:

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Ո՞ր կողմը անցա՞յ:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — (Ներս ցատկելով) Ո՛ւր է, ո՛ւր է:

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — (Մովը մատնանիշ) Ա՛յ, հո՛ն...

ԽՈՒՄԲԸ (Սարսափով, կիսաձայն) Մո՛վը...

ՄԻՄՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Կորա՛վ իր հոգին:

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Ա՛յ անիծված է այս ժայռը, հոսկե ճգնավոր
մրն ալ նետեր է ինքզինքը ծովը:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Ուրիշ վանականի մը բենն կախված,
շեշտապառ ու սաստիկ հուզված, բները անկարգ խառխափող շար-
ժումներով առաջ պարզած՝ կմտնե ներս):

ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Եկավ իր կո՛ւյրը, իր կո՛ւյրը...

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Կկեճա անշարժ ու ամբողջ հասակովը
ուղղվելով, ընդհանուր լուսքյան մեջ) Իրա՛վ է, իրա՛վ է:

ԲՈՂՈՐԸ — (Քար լուսքյուն, գլուխներ կկախեն վար):

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Ձեռներ վե բարձրացնելով) Ուրեմն...
Աստվա՛ծ իմ:

ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ — Այո՛, Աստվա՛ծ: Աստու՛ վրեժն էր ասի-
կա, եկեղեցին բանդել ուզելը անպատիժ չի մնար: Մե՛ծի վրեժը ին-
կավ ամենեն փոքրի գլխուն:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — Ա՛խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մա-
րուր արեղան:

ԱԳԱՍ ՎԱՆԱԿԱՆ — Հեղ ու բարի, համեստ ու սուրբ:

ԽՈՒՄԲ ՄԸ — Ան սուրբ էր, սուրբ:

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՆԱԿԱՆ — Եզե՛րքն իջնենք, եղբա՛րք, գուցե գրտ-
նենք դիակը, գոնե դիակը:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Երթանք, բերենք լաստը:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Դժվար է. բայց պետք է, որ բերենք լաս-
տը:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Լա՛տը:

ԱՆՏՈՆ ՎԱՆԱԿԱՆ — Զարմանք բան է. ինքը ազատեց ուրիշի
մը կյանքը ծովեն ու իր կյանքը տվավ ծովուն:

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՎԱՆԱԿԱՆ ՄԸ — Երթանք, երթանք, որոնե՛նք:

ՄՈՎՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ — (Աչքերը վե հառած ու մարգարեական
շեշտով մը) Լսեցե՛ք, եղբա՛րք: Եթե Աստված ողորմի ու գիակց
դանենք, պետք է տանինք թաղենք նոր եկեղեցիի սեմին: Զոհի նո-
խազը կմորթեն տաճարի սեմին:

ԳԱՎԻԹ ՎԱՆԱԿԱՆ — Տերը կխոսի քու բերնովդ: Թաղենք եկեղեցիի սեմին:

ԽՈՒՄԱԸ — (Շեռանալով) Թաղենք, Թաղենք եկեղեցիի սեմին:

Բոլորը դուրս. կնոջվի կույրը, որ կմտ միտակ:

5

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Խորտակված գլուխը կշարժե) Գացե՛ք... Թաղեցե՛ք... ձեր եկեղեցիի սեմին. հին աստվածներու սեմին. ա՛, կարո՛ղ են, հզո՛ր, այդ հին աստվածները. դեռ շա՛տ են հզոր...:

ՉԱՅՆ ՄԸ — Իզո՞ւր հանեցիր աչքերդ:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Խորին հուզումով ու անաբեկ) Ո՞վ է ատ, որ կհանդգնի...:

ՉԱՅՆԸ — Իզո՞ւր հանեցիր աչքերդ:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — (Վախեն ետ-ետ երթալով) Որո՞ւն ձայնն ես դուն... կուղևի նայիմ աչքերուդ խորքը...:

ՉԱՅՆԸ — Իզո՞ւր հանեցիր աչքերդ:

ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ — Իզո՞ւր...